

Խ. Ա. Հ. Մ.

Հ. Ա. Խ. Հ.

Պատկեռաբներ քոլոր յերկրների, միացե՛ք.

# ≡ ՆԱԽԱԿՈ- ԶԻԿՆԵՐԻ ≡

ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾԲԱԳԻԲ

(Ուսուցման 1-ին յեզ 2-րդ տարիների համար)

55.23

-23



ՀՐԱՏ. ՀԱՅԿ. ՀՐԱԶԻԴ. ԴԻՎԻԶԻԱՅԻ ՔԱՂՔԱՃՆԻ

ԵՐԵՎԱՆ

1926 թ.

1 MAR 2010

355.9.3  
Տ. 23 Ամս.

ԽՍՀՄ.

Հ. Ա. Խաչ.

Պրոլետարիներ բոլոր յերկրների, միացե՛ք.

300  
2664-ԾՐ

ՆԱԽԱԿՈ-  
ՉԻԿՆԵՐԻ

1927թ

ՔԱՂ ՊԱՐԵՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բացառագրով յեզ մերոդական ցուցումներով

(Առուցման Լ-ին յեզ 2-րդ տարիների համար)

ՀՐԱՏ. ՀԱՅԿ. ՀՐԱԶԻԴ ԴԻՎԻԶԻԱՑԻ ՔԱՂԲԱԺԵԿ  
ՅԵՐԵՎԱՆ

1926 թ.

10 JUL 2013

41.284

00

ՀՅ-ԱՊՁ

Նարված և «ԼինՈՏԻՊՈՎ»

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ  
Գրառ. 265թ. Պատ. 1:06 Տիւ. 350

### ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկա ժողովածուն պարունակում է իր  
մեջ նախակոչիկների քաղաքաբազմունքների  
առաջին և յերկրորդ տարվա ուսուցման ծրա-  
գիր, բացատրագիր այդ պարապմունքների  
վերաբերյալ և մեթոդական ցուցումներ նախա-  
կոչիկների քաղցեկների համար:

Ցուրաքանչյուր քաղցեկ պետք է լիովին  
յուրացնի բացատրագիրն ու ցուցումները և  
լսվ ծանոթանա յերկամյա ծրագրի բովանդա-  
կությանը, վորպեսզի ոլարզ պատկերացնի ի-  
րեն նախակոչիկի ստանալիք գիտելիքների ծա-  
վան ու նրանց հետ պարապմունքներ վարելու  
մեթոդները:

Վերջնական հաշվով նախակոչիկների հա-  
մար տարվող քաղաքաբազմունքները, վորոնք  
նրանցից գիտակից քաղաքացի յեն պատրաս-  
տում, և այդ քաղաքացիները վորոշ ժամանա-  
կից հետո բանվորագյուղացիական կարմիր  
բանակի շարքերն են մանելու պաշտպանելու  
համար բանվորների և գյուղացիների շահերը,

աղետք ե տան. 1) քաղաքական գիտակցություն,  
վոր անհրաժեշտ է նախակոչիկին, վորպես քա-  
ղաքացու և մարտիկի.

2) Հաստատուն հիմք պիտի տան հայտնա-  
բերելու համար ռազմական գիտակից կարգա-  
պահություն, վորը կազմակերպության հիմքն  
ու հաղթանակի յերաշխիքն է հանդիսանում:

Հայկ. Դիվ. Քաղբաժնի Ազիտպրոպմաս

## ԵԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԿՈՉԻԿՆԵՐԻ 30 ԺԱՄՅԱ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ-  
ՆԵՐԻ ԾՐԱԴՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐ-  
ՎԱ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ յես դու կանչված նախադորու-  
կաչյան պատրաստության.
2. Նախակոչիկի պարտականությունները.
3. Ուսուցումն՝ հավաքույթներում և հա-  
վաքույթներից դուրս.
4. Կարմիր Բանակը, վորպես պահոկ  
ԽԱՀՄ-ի.
5. Ինչպե՞ս բանվորներն ու գյուղացիներն  
իշխանությունն առան իրանց ձեռքը.
6. Խորհրդային իշխանության առաջացու-  
մըն Անդրկովկասում և Հայաստանում.
7. Քաղաքացիական կովի սկիզբը և կար-  
միր գվարդիան.
8. Քաղաքացիական կոկվը.
9. Սպիտակ բանակները՝ ոռւս և ոստր-  
ազգի կապիտալիստների սպասում.
10. Թկկ (բ) քաղաքացիական կովում.

11. Կարմիր բանակը խաղաղ վիճակում.

12. Խորհրդային, իշխանությունը՝ բանվորների ու գյուղացիների իշխանությունն է:

13. Լենինը և ՌԿԿ (Բ) :

14. » » »

15. » » »

16. Նոր պատերազմների վանդը.

17. Մեր հարեանները—Լեհաստան, Ռումինիա և ուրիշները.

18. Մեր բարեկամները.

19. Նախակոչիկը տանը:

---

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՆԱԽԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ  
ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴՏՄԱՐԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

Նախակոչիկների քաղաքական պարագ-  
մունքների համար հատկացված ե՝ ուսուցման  
առաջին տարին՝ 30 ժամ, յերկրորդ տարին՝ 45  
ժամ։ Ծրագրներում վորոշված ե. առաջին  
տարվա համար՝ 19 զրույց, յերկրորդ տարվա  
համար՝ 37։

Մնացած բոլոր ժամերը պետք ե հատկաց-  
վեն ընթացիք խնդիրներին ու կրկնություն-  
ներին։ Յերկու ծրագիրներն ել մաքսիմալ  
չափով ուղմականացված են. այդ ծրա-  
գիրներում շատ քիչ կան «քաղաքացիա-  
կան» խնդիրներ (թեմաներ)։ Պետք ե աշխա-  
տել, վոր քաղաքարապմունքնեցին հատկացված  
ժամերը լիազես ոգտագործվեն ծրագրի թե-  
մաների համար։

Բոլոր գյուղացիական «հարցերը», ինչ-  
պես, որինակ, հարկային, ապահովագրա-  
կան, գյուղատնտեսական, կոռպերացիայի

Հարցերը, պետք է իրանց լուծումն ստանան  
արտադպրոցական աշխատանքի կարգով։ Պետք  
է նկատի առնել նաև տվյալ շրջանի պայման-  
ները։ Այսպես որինակ, յեթե տվյալ շրջանում  
տեղի յե ունեցել անբերիություն, կամ շատ  
սուր է հողաշինարարական, փայտեղեն ստա-  
նալու, հարկերը դանձելու հարցը և այլն,  
անհրաժեշտ է մեկ կամ յերկու զրույց հատ-  
կացնել այդ հարցերի վերլուծման և պարզա-  
բանության։

Միության մեջ մտնող բոլոր հանրապե-  
տությունների մասին, տեղեկություններ տա-  
լու համար հատկացված է մեկ զրույց, վորի  
միջոցին՝ ամենից շատ տեղեկություններ հա-  
դրդգում են ՌԻՖՍՀ մասին։ Նայած թե, վոր  
հանրապետության մեջ է տեղի ունենում նա-  
խազրակոչյան ուսուցումը, պետք է մի զրույց  
ել հատկացնել տվյալ հանրապետության մա-  
սին ծանոթություններ տալու համար։ Այդ  
զրույցների ծրագիրները մշակում են ԱԿՕՔ-նե-  
րը։

Ունենալով 11 լրացուցիչ զրույցներ առա-  
ջին տարվա համար և ութ զրույց՝ յերկրորդ  
տարվա համար, կարելի յե մի քանի ժամեր  
հատկացնել աեղական բնույթ՝ ունեցող զրույց-

ներին, յերկրուղ չունենալով, վոր ծրագիրը  
դրանով կարող է տուժել։

Քաղղեկներն ու խմբակավարներն հատուկ  
ուշադրություն պետք է դարձնեն, վոր նախա-  
կոչիկները դաստիարակվեն, վորպես կարմիր  
բանակի՝ ուազմականորեն, կարգապահ ապագա  
մարտիկներ։ Հավաքույթների ժամանակ նա-  
խակոչիկներին պետք է պատվաստել կարգա-  
պահության տարրեր։

Ուկցե՛ս անդամներից նշանակված ամեն մի  
քաղղեկ և խմբակավար պետք է կարգապահու-  
թյան և ուազմական դաստիարակության որի-  
նակ լինի։

Ավագ քաղղեկները, վորոնք նշանակված  
են նախակոչիկների հետ քաղպարապմունքներ  
տանելու համար, պարտավոր են ամեն որ սիս-  
տեմաբար հրահանգել կոմյերիտական խմբա-  
կավարներին։ Առանց այդպիսի հրահանգման՝  
ծրագիրը կիսատպուտ կը լինի։

Զպետք է աշխատել քաղպարապմունքնե-  
րը կապել (կոմպլեքսացնել) հանրակրթական  
տուարկաների հետ այս ինդիբրը կոմյերիտմի-  
ության անդամ—խմբակավարի ուժից վեր կը  
լինի։ Ավելի լավ է զրույցները տանել՝ գոր-  
ծադրելով զննական (դիտողական) միջոցներ։  
Նպատակահարմար չե անընդհատ 2 ժամ իրար

յետեից պարապել քաղաքական պարապմունք-ներով, մանավանդ առաջին անգամները։ Նախակոչիկները չեն կարող 2 ժամ անընդհատ լար-ված ուշադրությամբ զբաղվել, և դրա համար ել խմբակավարներն ստիպված կը լինին նույնը շատ անգամ կրկնելու։

**Ծրագրի կիրառման հաջողությունը գրւ-խավորապես կախված է, թե խմբակավար-կոմ-սոմոլիստներն ի՞նչ չափով ու ինչ վորակի հրա-հանգներ կատանան։**

Ավագ քաղղեկները պետք ե հրահանգելու համար հիմնավոր կերպով պատրաստվեն և վորքան հնար ե լրիվ ու լայնորեն տանեն խմբա-կավարների հետ հրահանգության պարապ-մունքները։

**Հ. Ո-Հ խորհրդի ագիտապրոպրաժնի պետի  
տեղակալ՝ ԶՈՐԻՆ**

**Դպրոցա-Ծրագրային պետի ժամ. պաշ-  
տոնակատար՝ ՇՈՒԲԻՆ**

**Ճիշտ ե՝ Ագիտապրոպրաժնի քարտուղարի  
ժամ. պաշտոնակատար՝ ՔԻԼԵՅԵՎ**

## ՆԱԽԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔ- ՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

### 1. ԻՆՉՈՐԻ ՅԵՍ ԴՈՒ ԿԱՆՉՎԱԾ ՆԱԽԱՉՈՐԱ- ԿՈՉՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

Կարմիր Բանակը հարկավոր է ԽՍՀՄ պաշտ պանության համար։

Բանակում կարմիր բանակայիններին սո-վորեցնում են ուսպմական գործ և քաղաքական դրագիտություն։

Խորհրդային կառավարությունը՝ զոր-պեսզի բանվորներին ու գյուղացիներին իսո-դադ աշխատանքից, վորքան կարելի յե, կարձ ժամանակով կարի, բանակը կրճատել ե մինչև հնարավորության ծայրագույն սահմանները։ Կրճատված ե նաև բանակում ծառայելու ժա-մանակը, ցարական հին բանակի համեմատու-թյամբ։ Զինվորական գործը շատ բարգացել է։ Ուստի և անհրաժեշտ ե, զոր ամեն մի բանվոր և գյուղացի՝ նախքան բանակի շարքերը կանչ-վելը, իմանա ուսպմական գործի և քաղաքա-

կան գրագիտության հիմունքները։ Դրա համար ել մտցրված և նախազորակոչյան պատրաստություն։

Յերիտասարդությունը մինչև 19 տարեկան հասակը պետք է անցնի սկզբնական նախազորակոչյան պատրաստությանը, իսկ 19 տարեկանից սկսած նախազորակոչյան պատրաստություն ձեռք է բերվում վարժակայաններում։ Վարժակայաններում բանվորագյուղացիական յերիտասարդությունը պատրաստվում է մտնելու կարմիր Բանակը, սովորելով սազմական դործը և քաղաքական գրագիտություն։

## 2. ՆԱԽԱԿԱՐՁԻԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախակոչիկը պետք է նախապատրաստվի կարմիր Բանակում ծառայելու համար։ Լավ յուրացնել սազմական դործի և քաղդրագիտության վերաբերյալ սկզբնական դիտելիքները, վրանք ավանդվում են վարժակայաններում, —ահա նախակոչիկի առաջին պարտականությունը։

Խորհրդային Միության Հարկավոր է լով սազմունակ կարմիր բանակ։ Վատ նախապատրաստված նախակոչիկը վատ ել կարմիր բանակային կը լինի։

Յերկրորդ պարտականությունն ե՝ լինել կարգապահ։

Առանց կարգապահության չի կարող գոյություն ունենալ և վոչ մի կազմակերպություն, առավել ևս սազմական կազմակերպություն։ Կարմիր Բանակը, այն ե՝ զինված բանվորներն ու զյուղացիները, վոր կոչված են պաշտպանելու ԽՍՀՄ, —պետք է որինակ լինի կարգապահության։

Առանց հաստատոն կարգապահության, առանց ներքին կյանքի կարգ-կանոնի ձգրիտ պահպանության, առանց պետերի համանները ձշորեն կատարելու՝ կարմիր Բանակը գոյություն ունենալ չի կարող։ Նախակոչիկին պետք է նախապատրաստության ժամանակ կարգապահական ունակություններին ընտելացնել։ Նախ վորպեսզի նախակոչիկն ապագայում բանակում յեղած ժամանակ նախապատրաստված լինի գիտակցորեն պահպաններու կարգապահությունը, և յերկրորդ՝ վորովհետեւ առանց գրան չի կարելի ուսուցման գործը կանոնավոր վարել նաև նախազորակոչյան կայնում։

Առաջին իսկ հավաքույթներից սկսած՝ պետք է ընտելանալ ձշորեն կատարել բոլոր համանները, իր պետի բոլոր կարգագրու-

թյունները: Հավ կարգապահ նախակոչիկը նաև  
լով կարմիր բանակային կլինի:

### ՅԻՍՈՒՅՑՈՒՄԸ ՀԱՎԱՔՈՒՅՑԹՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՀԱՎԱՔՈՒՅՑԹՆԵՐԻՑ ԴՐՈՒՅ

Կապիտալիստական պետությունները կա-  
ռող են յուրաքանչյուր բոպե հարձակվել մեզ  
վրա: Պետք է պատրաստ լինել ԽՍՀՄ պաշտ-  
պանելու համար: Դրա համար առաջին հերթին  
պետք է սովորել սագմական գործը: Խորհրդա-  
տին կառավարությունը և կոմունիստական  
կուսակցությունը հոգ են տանում, վոր կար-  
միր բանակը լինի սպառազինված, հագված և  
ունենա այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ է:  
Նախակոչիկը համաքույթներում պետք է ու-  
շագրությամբ սովորի սագմական գործը:

Առանց վարժուելու չես կարող սովորել հրա-  
ցան, գնդացիր և թնդանոթ բանեցնելը: Աշխա-  
տավորության ազատագրության գործին ա-  
մենից նվիրված մարտիկն առանց վարժվելու  
չի կարող թշնամուն հաղթել: Պետք է սովորել  
ճանաչել թե ո՞վ է աշխատավորության թշնա-  
մին և թե ի՞նչպես պետք է հարփածել այդ  
թշնամուն մարտում: Մարտում ավելի շատ  
ընկնում են անվարժ մարտիկները: Նախակո-  
չիկը պետք է հավաքույթներում լրակ սովորի,

և տանը վարժվի ու կատարել իրգործվի: Տանը  
նախակոչիկին ողնության են գալիս ակղական  
կուսակցական և կոմյերիտական կազմակեր-  
պությունները, խրճիթ-բնթերցարանը և ուգ-  
մական անկյունը:

### 4. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ, ՎՈՐՓԵՍ ՊԱՀԱԿ ԽՍՀՄ-Ի

ԽՍՀՄ-ն խաղաղ աշխատանքի պետու-  
թյուն է: Խորհրդային յերկրի բանվորներն ու  
գյուղացիներն իրանց աշխատանքով բարվո-  
քում են իրանց վիճակը:

Խորհրդային պետությունը չի ձգտում նր-  
գաճելու և սորկացնելու ուրիշ ժողովուրդներ:   
Նա ձգտում է խաղաղություն պահպանել իր  
հարեանների հետ: Համաշխարհային բուր-  
ժուազիան ատում և ԽՍՀՄ-ին և սպասում է  
հարմար գեղքի, վոր մեզ վրա հարձակվի:   
Բանվորների և գյուղացիների խաղաղ աշխա-  
տանքի պահակ է կանգնած Կարմիր բանակը:   
Քաղաքացիական կովի ըրջանում Կարմիր բա-  
նակը հետ մղեց համաշխարհային բուրժուա-  
զիայի բոլոր գրոհները և պաշտպանեց Խորհր-  
դային յերկիրը: Ինչքան ուժեղ լինի Կարմիր  
բանակը, այնքան քիչ կը հարձակվեն ԽՍՀՄ-ի  
վրա:

Նախակոչեկը սովորելով սազմական գործը, կատարելով՝ զինվորական բոլոր կանոնադրությունների պահանջները, կանգնած է վորպես ԽՍՀՄ-ի պահակ:

### 5. ԲԱՆՎԱՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՑ ԶԵՐՔՆ ԱՌԱՆ

Հեշտ չեր բանվորների ու գյուղացիների համար ստեղծել իրանց պետությունը ու իրանց կարմիր Բանակը: Թե՛ գյուղացիները, թե՛ բանվորները քանիցու փորձ են արել կարվածատերերի և կապիտալիստների ճնշումն ու շահագործությունը նվազեցնելու: Միայն 1917 թ. փետրվարին ապստամբված բանվորներն ու գյուղացիները թոթափեցին Նիկորայ 2-ի արյունոտ ինքնակալության լուծը: Այդ ժամանակ գեռ վերջացած չեր իմպերալիստական պատերազմը, վորին մասնակցում եր նաև Ռուսաստանը: Վորովչետե բանվորները բավարար չափով չեյին նախապատրաստված և կազմակերպված, ուստի և իշխանությունն անցավ բուրժուազիայի ձեռքը:

Բուրժուական կառավարությունը չըկարողացավ և չցանկացավ պատերազմին վերջնել և պատերազմի չնորհիվ քայլքայված և

ավերված յերկրին խաղաղություն և հաց տայ: Բանակը նարից մղեցին պատերազմի մեջ՝ ոռւս և ոտարազգի կապիտալիստների շահերի համար: Կապիտալիստները շարունակում եյին շահագործել և կեղեքել բանվորներին: Հոգը մնում եր կարմածատերերի ձեռքին:

Գյուղացիական կոմիտեները ձեռքակալվում եյին բուրժուական կառավարության ձեռքով: 1917 թվականի հոկտեմբերի 25-ին Լենինգրադի ապստամբած բանվորները, նաև վաստիները և զինվորները ՌԿԿ (Բ) զեկավարությամբ և ընկ Լենինի գլխավորությամբ տապալեցին կերենսկու բուրժուական կառավարությունը: Բանվորներն ու գյուղացիները նման ապստամբություններ բարձրացրին ամբողջ յերկրում: Բովանդակ յերկրում իշխանությունը խորհուրդների ձեռքն անցավ:

### 6. ԽՈԲՀԻԴԻԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՅ- ՅՈՒՄԸ ԱՆԴԻԿՈՎԿԱՍՈՒԻՄ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱ- ՆՈՒՄ:

Ռուսաստանում խորհրդային իշխանությունը հաստատվելուց հետո՝ Անդրկովկասի հականեղափոխականները, դաշնակցականների մենչեւիների և մուսաֆաթիստների առաջնորդությամբ Անդրկովկասը անջատեցին հե-

զափոխական թուսաստանից : Վրաստանի, Հայաստանի և Աղբբեջանի բանվորները, կոմունիստների առաջնորդությամբ կատաղի կոիվներ մզեցին այդ հակածեղափոխական կուսակցությունների գեմ, մինչև վոր Անդրկովկասնել խորհրդային յերկիր դարձավ և իր հոժար կամքով մտավ Խ. Ս. Հ. Միության մէջ :

Աղբբեջանի խորհրդայնացումը տեղի ունեցավ 1920 թ. ապրիլի 29-ին, Հայաստանինը՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին, իսկ Վրաստանինը՝ 1921 թ. փետրվարի 25-ին :

Հայաստանի խորհրդայնացումից առաջ, յերկրի իշխանությունը գտնվում եր խմբապետական դաշնակցական կուսակցության ձեռքին : Դաշնակների որոք Հայաստանի աշխատավորները ծայր աստիճան աղքատացել եյին և ուժասպառ յեղել անվերջ կոիվներից : Դաշնակները միշտ պատերազմներ եյին մզում իրանց հարեանների՝ վրացիների, թուրքերի և տաճիկների գեմ : Այդ պատերազմների հետեանքն եր լինում սով, գաղթականություն և հիվանդություններ : Խմբապետները իրենց ուղած ձեռք թալանում և ահաբեկում եյին ժողովրդին : Դպրոցները փակ եյին, Հայաստանը կտրված եր արտաքին աշխարհից և շրջապատված թշնամիներով : Աշխատավորների դրու-

թյունը անտանելի եր : Այդ պատճառով 1920 թվի մայիսին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ապստամբություն բարձրացրին Լենինականում, (նախկին Ալեքպոլում) նոր Բայազետում, Դիլիջանում, Կարսում և մի շարք այլ վայրերում և պահանջեցին հաստատել խորհրդային իշխանություն : Բայց բոլոր այդ շարժումները դեռ լավ կազմակերպված չեյին, դրա համար ել դաշնակներին հաջողվեց ժամանակավորապես ճնշել ապստամբությունը :

Նրանք գընդակահարեցին և բանտարկեցին Հայաստանի աշխատավորության լավագույն ներկայացուցիչներից շատերին :

Հայաստանի բանվորների և գյուղացիների դրությունը ավելի յեկս վատացավ և նույն 1920 թվի նոյեմբերին Դապախի աշխատավոր գյուղացիությունը նորից ապստամբվեց դաշնակների գեմ . հեղափոխական գյուղացիներին ոգնության հասավ կարմիր բանակը և նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեց խորհրդապետին իշխանություն :

7. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲՆԱ-  
ՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԳՎԱՐԴԻԱՆ

Կապիտալիստները, կալվածատերերը և ցարի գեներալները չեյին կարող հաշտ աչքով նայել բանվորների և գյուղացիների իշխանության գոյության վրա, այն բանվորների և գյուղացիների, վորոնք նրանցից խլել եյին իշխանությունը, հողը, ֆարբիկներն ու գործարանները: Կապիտալիստները, գեներալները և կալվածատերերն սկսեցին ցարական սպաներից, կազակներից, և կուլակներից զինված ուժ պատրաստել՝ խորհրդային իշխանությունը տապալելու և նախկին կարգերը վերականգնելու համար: Ամբողջ համաշխարհային կապիտալն ոգնում եր ոռուս սպիտակ գվարդիականներին:

Յերիտասարդ խորհրդային հանրապետությունն իր գոյության առաջին որերից սկսած պետք եր սպիտակ գվարդիականների զինված ուժերին դիմ կենար: Կարմիր գվարդիան յերիտասարդ Խորհրդային Հանրապետության առաջին զինված ուժն եր: Բանվորական կարմիր գվարդիան փետրվարյան հեղափոխությունից հետո՝ սկսեց ստեղծվել Լենինգրադի գործարաններում և Փարբիկներում, իսկ հետո

և մյուս քաղաքներում: Հոկտեմբերյան հետաշրջման ժամանակ արդեն կային կարմիր վարդիայի բազմաթիվ ջոկատներ, վորոնք վազմված եյին բանվորներից, կամավորնայազմված եյին բանվորներից, կարմիր գվարդատիբուններից և զինվորներից: Կարմիր գվարդիան գործուն մասնակցություն ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխության մեջ. նա ջարդեց ուեմբերներ, կողակների ջոկատները և Հարավ-Կերենսկու կողակների ջոկատները: Հարավ-Կերենսկու հաջողությամբ կոիվ մղեց կալերեկելքում:

8. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԿԻՐԸ ԿՐՅԱԿԵ ՈՂԱԿՈՒՄ

1919 թ. Խորհրդային յերկիրը գտնվում եր սպիտակ բանակների ողակում: Սերիբի կազմից հարձակում եր գործուն ծովակալ Կուչակի բանակը, Ռուսաստանի հարավ-արևելքից՝ գեներալ Դենիկինը, Լենինգրադին մոտենում եր գեներալ Յուգենիչը: Ամբողջ Սիբիրը, Ռւկրայնան կտրված եյին: Գեներալ Դենիկինի բանակը գրավել եր Որյու քաղաքը: Խորհրդային հանրապետության ոլոշտապանության համար վուտի կանգնեց բովանդակ աշխատավոր ժողովուրդը: Կարմիր Բանակի հերոսությունը և ինքնազոհությունը ճեղքեց բազմաթիվ թշնամիների ողակը և աղատեց խորհրդային հանրապետությունը:

Նախակոչիկը պետք է սովորի Կարմիր բանակի պատմությունը և հմտություն ձեռք բերե կովելու ԽՍՀՄ-ի թշնամիների դեմ։ Աշխատավորության ազատագրության գործին նվիրվածությունը, խիզախությունն ու հերոսությունը, սաղմական գործի գիտությունը սորանք են, վոր Կարմիր Բանակը դարձնում են անպարտելի։

Հայկական Կարմիր Բանակն ել քաղաքացիական կոփվների պատմություն ունի։ Դաշնական կոփվների գործը զբաղված ել ըավե գերջնականապես գուրս վոնդեց Խորհրդուրք գյուղացիներին կոտորելով և գյուղերը դային իշխանության սահմաններից։ Դաշնակթայանելով։ Նրա մեջ կարգապահություն չկար, և նա խմբապետների ձեռքին խազալիք եր։ Կանոնավոր գորքերի դեմ կովել նա չեր կարող։

Դաշնակների բանակը ջարդ ու փշուր յեղագ 1920 թվին տաճկական փոքրաթիվ զինվորների կողմից։

Հայաստանի խորհրդայնացումից հետո, բանվորագյուղացիական իշխանությունը դաշնակների բանակը վերակազմության յենթարկեց։ Նրանից հետացգեցին խմբապետները և թալանչի ու ցարական ոՓիցերները։ Հայաստանի խորհրդային իշխանությունն ել ունեցավ իր բանվորագյուղացիական Կարմիր Բանակի պահակի պատմությունը մեր դեմ հանեց պահա-

1921 թվի դաշնակների կազմակերպած գիւղբարյան հակահեղափոխության ժամանակ հայաստանի Կարմիր Բանակը մնշեց այդ ապրուամբը յությունը։ Դամարլվի և Յելենովկայի Փրոնտներում Կարմիր Բանակն ամիս ու կես հերոսաբար կովեց դաշնակ հակահեղափոխաների գեմական գերազագույն վերագրավեց Յերկանը։ Զանգեզուր փախած և խմբապետ Նժղեհն միացած դաշնակներին Հայաստանի Կարմիր Բանակը մի շարք կոփվներով ջարդ ու փշուր անակների ժամանակ նրանց զբաղված ել ըավե գերջնականապես գուրս վոնդեց Խորհրդուրք գյուղացիներին կոտորելով և գյուղերը դային իշխանության սահմաններից։ Դաշնակթայանելով։ Նրա մեջ կարգապահություն չկար, և նա խմբապետների կողմից։

#### 9. ՍՊԻՏԱԿ ԲԱՆԱԿՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՎՈՏԱՐԱԳԳԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՍՊԱՍՈՒՄ

Ռուս և ռուսարազգի կապիտալիստներն ոգում եյին սպիտակ բանակներին։ Ֆրանսոխական և անդլիական բուրժուազիան Կոլչակի, Դենիկինի ու Յուգինիչի բանակներին հայթայթում եր զենք, ոումբ և հագուստ։ Ռուսարազգի բուրժուազիան աշխատում եր սպիտակ բանակների ոգնությամբ ստրկացնել մեր յերկիրը։ Յերբ ռուս զեներալների սպիտակ բանակները Կարմիր Բանակի ձեռքով ջարդվեցին, ռուսերկրյա բուրժուազիան մեր դեմ հանեց պահա-

կան լեհաստանը։ Կարմիր Բանակը չետ մղենեց պաշտպանելու իր հողը, Փաբրիկներն ու լեհական պաների՝ մեր խորհրդային հանրագործարանները։ Աճում, մեծանում եր Կարմիր պետության վրա գործած հարձակումները Բանակը, նա կոփվում եր կոփվներում։ Սպի-վոչնչացրեց Բարոն Վրանգելի վերջին սպիտառակ բանակները կազմակուծվում եյին։ գվարդիական բանակը, ազատելով Դրիմը։

Նախակոչիկը պետք է իմանա, վոր բոլոր ու գյուղացիները վատ եյին կովում մեր զեմ, յերկրների բուրժուազիան ողնում եր սպիտակամ անցնում եյին մեր կողմը։ Սպիտակների գվարդիականներին, կալվածատերերին, վոր նրանք մեր յերկիրն ավերեն։

Կարմիր Բանակը պետք է պատրաստ լինի, վոր ամեն բոպե իր կրծքով պաշտպան կանգնե ԽՍՀՄ։ Նախակոչիկը—ապագա կարմիր բանակայինը—պետք է սովորի ԽՍՀՄ-ի ամբողջ աշխարհի կեղեքվածների գործի համար լավ մարտիկ լինելու։

#### 10. ՌԿԿ (Բ) ՔԱՂԱՔԱՅԻՍԿԱՆ ԿԾՎՈՒՄ

Զնայելով՝ վոր սպիտակ բանակներն ունելին ավելի մարզված ու փորձված հրամանատարական կազմ, լավ սպառագինություն, բայց և այնպես Կարմիր Բանակը նրանց ջախջախեց։ Մեր յերկրի աշխատավորությունն իր կաշվի վրա փորձելով՝ սկսեց լմբոնել, վոր սպիտակները բերում են աշխատավորության համար ստրկություն, բանտ, կախաղան և դաժուն կեղեքում։ Ամբողջ յերկրը վոտքի կտնդ-

Զորահավաքի յենթարկված բանվորներն ու գյուղացիները վատ եյին կովում մեր զեմ, կամ անցնում եյին մեր կողմը։ Սպիտակների թիկունքում բարձրանում եյին ապստամբություններ և շարունակ քաղաքացիական կոփվներ եյին տեղի ունենում։

Սպիտակների դեմ կոփվը դեկավարում եր ՌԿԿ (Բ)՝ լնկի. Լենինի գլխավերությամբ։ Դեռ թաքստոցում յեղած ժոմանակ ՌԿԿ (Բ) զեկավարում եր բանվոր դաստկարգի կոփվը՝ ընդդեմ ցարիզմի ու բուրժուազիայի։ ՌԿԿ (Բ) զեկավարությամբ եր, վոր բանվորներն ու գյուղացիները գլուխ բերին Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Քաղաքացիական պատերազմի ընթացքում ՌԿԿ (Բ) իր լավագույն անդամներին ուղարկում եր Կարմիր Բանակի շարքերը։ ՌԿԿ (Բ) զեկավարում եր սպիտակների գեմ կոփվը, նրա անդամները կովում եյին ասածին շարքերում։ Նրանք քաջության և աշխատավորության գործին նվիրվածության որինակ եյին տալիս։

11. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԽԱՂԱՂ ՎԻՃԱԿՈՒՄ  
Քաղաքացիական կովի ժամանակ Կարմիր  
Բանակը բաղկացած էր՝ 5,300,000 հոգուց։  
Մեր յերկիրն ազատելով սպիտակ ոռուս և ոռուր  
բանակներից, Կարմիր Բանակն սկսում է կրծատ-  
վել, և այժմ նա իր շարքերում ունի 562,000  
մարդ։ Խորհրդային իշխանությունը մի քանի  
անգամ առաջարկել է կապիտալիստական պե-  
տություններին՝ զինաթափվել, սակայն այդ  
առաջարկությունները մերժվեցին։ Կապիտա-  
լիստական պետությունները շարունակում են  
սպառագինվել։ Նրանք պատրաստվում են նոր  
պատերազմների, նոր նվաճումների, նոր հա-  
փրատակությունների։

Մեզ անհրաժեշտ ե ունենալ ուազմունակ  
Կարմիր Բանակ ԽՍՀՄ պաշտպանության հա-  
մար։

Խաղաղ ժամանակի պայմաններում Կար-  
միր Բանակն զբաղվում է ուսուցումով, դաս-  
տիարակությամբ և իր ուազմունակությունը  
բարձրացնելով։ Նախազորակոչյան պատրաս-  
տությունը նպաստում է Կարմիր Բանակի հզու-  
րության ամրանալուն։ Նախակոչիկը պետք է  
սովորե ուազմական գործը, պետք է ընտելանա  
ճշորեն կատարելու բոլոր հրամանները և

նվիրված լինի աշխատավորության ազատու-  
թյության գործին։

12. ԽՈՐՀՌԴԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆ-  
ՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒ-  
ԹՅՈՒՆՆ Ե

Հոկտեմբերյան Հեղափոխությունից հե-  
տո՝ մեր յերկիրը կառավարում են բանվորա-  
կան, գյուղացիական և կարմիր բանակային-  
ների պատգամավորների խորհուրդները։ Խոր-  
հուրդներն ընտրվում են միայն աշխատավոր-  
ների կողմից։ Կուլակները, վաճառականները,  
նեպմանները խորհուրդների համար ընտրելու  
և ընտրվելու իրավունքից չեն ունենալու։ Աշ-  
խատավոր կանայք, բանվորուհիները և կին  
գյուղացիները խորհրդային պետության մեջ  
բանվորների և գյուղացիների հետ համահա-  
վասար իրավունքներ ունին։ Խորհրդային պե-  
տության մեջ ամենից պատասխանատու պաշ-  
տոնները վարում են առաջավոր անկուսակցա-  
կան բանվորներ և գյուղացիներ և նրանց լավա-  
գույն ներկայացուցիչները, շահագործողների  
գեմ բազմամյա կովում փորձված կոմունիստ-  
ները (բայլշվիկները)։ Բանվորների և գյուղա-  
ցիների միությունը Խորհրդային իշխանության  
հիմքն է։ Միայն այդ միության ընորհիվ եր,

վոր բանվորներն ու գյուղացիները՝ կուսակցության դեկավարությամբ, դուրս քչեցին բոլոր պարագիտներին և սպիտակ բանակներին ու բոլոր ֆաբրիկները, գործարանները, հողերու անտառները հանձնեցին աշխատավոր պետության։ Քաղաքացիական կրիվը վերջանալուց հետո՝ սկսվեց վերականգնել ժողովրդական տնտեսությունը։ Գյուղատնտեսությունը համարյա հասել է նախապատերազմյան տառեճանին։ Արդյունաբերությունն արագությամբ վերականգնում է։ Ժողովրդական տնտեսության այդպիսի արագ զարգացումը հնարավոր դարձավ միայն բանվորների և գյուղացիների սերտ միության չնորհիվ։

### 13. Լենին ՈՒ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ)

Իւլիչը ծնվել է 1870 թվի ապրիլի 23-ին, Ռույանովսկ (նախկին Սիմբիլսկ) քաղաքում։ Նրա հայրը Ռույանովսկի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ (դեկավար) եր։

Համարաբանն ավարտելուց հետո՝ ընկ. Լենինն իրան նվիրեց՝ բանվորներին ու գյուղացիներին կապիտալիստներից և կալվածատերներին ազատությունը տեսական կամ մասնակիությունը պաշտպանության ամբողջ գործը, իսկ հետո ել՝ ժողովրդական տնտեսության վերականգնման գործը։ Եսերների կուսակցությունը ընկ. Լենինի գեմ մահափորձ կատարեց։ Ընկ. Լենինը, վոր վիրավորվել եր թունավորված գնդակով, առող-

նարկ հասակում նա չիմնեց «Բանվորների ու գատագրության պայքարի միությունը»։

Բանտ, աքսոր կրելով, նա ստիպված յեղագարական վոստիկանության ձեռքից թագնվել արտասահմանում։ Ընկ. Լենինը բանվոր գասակարդի լավագույն զավակներից կազմեց Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը։ Յարին գահընկեց անելուց հետո՝ բուրժուական կառավարությունը յերկար ժամանակ Լենինին թույլ չեր տալիս Ռուսաստան վերագանակ թույլ տալիս Ռուսաստան, ընկ. Լենինը բանվորներին և գյուղացիներին առաջնորդեց դեպի՝ կապիտալիստների և կալվածատերների իշխանության վեմ մզվող կոիվը։ Բուրժուական կառավարությունն ուզում եր նրան ձերբակալել և սպանել։ Գտնվելով թաքսոսում՝ ընկ. Լենինը նախապատրաստեց դինված ապստամբություն՝ կապիտալիստների կառավարության դեմ։ Անցնելով խորհրդային պետության դլուխը՝ ընկ. Լենինն սկսեց զեկավարել խորհրդային յերկրի պաշտպանության ամբողջ գործը, իսկ հետո ել՝ ժողովրդական տնտեսության վերականգնման գործը։ Եսերների կուսակցությունը ընկ. Լենինի գեմ մահափորձ կատարեց։ Ընկ. Լենինը, վոր վիրավորվել եր թունավորված գնդակով, առող-

ջաղավ և նորից աշխատանքի անցով, սուկան  
մի քանի տարի միայն։ Բանվորների և գյուղա-  
ցիների գործի համար յերեսնամյա պայքարը,  
յերկրի կառավարության հոգաները ընկ։ Լենի-  
նի ուժերը ջրառեցին։ Վերքը ծանր հետեանք  
ունեցավ ընկ։ Լենինի առողջության համար։  
Ընկ։ Լենինի մահը ծանր հարվածի տպավորու-  
թյուն գործեց ամբողջ աշխարհի տասնյակ միլ-  
լիոնավոր աշխատավորների վրա։

#### 14. Լենինը ՅԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱՄՈՒՆԻՍ- ՏԱԿԱՆ ԿԹԻՍՑԿՑՈՒԹՅՈՒՆԸ (բ) (Շարունակություն)

Լենինն իր կյանքի քսանհինգ տարին նվի-  
րեց Ռուսաստանի կոմունիստական կռւսակցու-  
թյունն ստեղծելու գործին։ Ընկ։ Լենինը և իր  
կռւսակցությունը աշխատավորության գործին  
յերբեք չդավաճանեցին։ 1905 թվականին կռւ-  
սակցությունը՝ ընկ։ Լենինի զեկավարությամբ  
կազմակերպեց բանվորների զինված ապստամ-  
բություն ցարի դեմ։ Ընկ։ Լենինն ու ՌԿԿ (բ)  
բանվորներին և գյուղացիներին առաջնորդե-  
ցին դեպի կոկվ համաշխարհային սոսկալի  
սպանդի դեմ, վոր նյութել եր համաշխարհա-  
յին կապիտալը, և ստեղծեցին հզոր կարմիր  
բանակ։

Քաղաքացիական կռվի շրջանում ընկ։  
Լենինը զեկավարում եր բանվորների և գյու-  
ղացիների պայքարը։ ՌԿԿ (բ) զեկավարու-  
թյամբ՝ աշխատավորությունն ստեղծեց աշ-  
խարհիս առաջին բանվորագյուղացիական հան-  
րապետությունը։ Ընկ։ Լենինի ավանդների հա-  
մաձայն՝ բոյլշիկների կռւսակցության անդամ  
կարող ե լինել ամենից լավ, ամենից ազնիվ,  
խիզախ, նոր կյանքի համար կռվին անսահման  
նվիրված ամեն մի բանվոր և գյուղացի։ Ամեն  
մի զորամասում, Փարբեկներում և գործարան-  
ներում, խորհրդացին հիմնարկություններում,  
գյուղերում և ավաններում գոյություն ունի  
ՌԿԿ (բ) բջիջներ։

#### 15. Լենինը ՅԵՎ ՌԿԿ (բ) (Շարունակություն)

Ընկ։ Լենինը կռւսակցության ավանդ և թո-  
ղել, վոր բոլոր ուժերով ամրացնի բանվորների  
և գյուղացիների միությունը։ Քաղաքացիական  
կռվի ժամանակ՝ այդ միությունը մի զինված  
դաշինք եր կարգածատերերի դեմ։ Այժմ այդ մի-  
ության նպատակն է՝ գյուղացիների և բանվոր-  
ների փոխագարձ ոգնության և գյուղատնտե-  
սության ու արդյունարերության առողջա-  
շում։

Ընկ. Լենինն ավանդ է թողել կուսակցության՝ զարգացնել և ամրացնել զանազան ազգությունների աշխատավորների միությունը։ Պետք է խորհուրդների հանրապետությունը պահպանել համաշխարհային կապիտալից։ Ընկեր Լենինը կուսակցության ավանդ է թողել՝ ամրացնել կարմիր Բանակը և կարմիր նախատորմը։ Խորհուրդների հանրապետությունն ամբողջ աշխարհի բանվորներին և գյուղացիներին ցույց է տալիս նրանց ազատության ուղին։ Ընկ. Լենինն անդադար հոգ եր տանում ամբողջ աշխարհի աշխատավորության միության համար։ Այս խողիբը կուսակցության խնդիրն է։ Բանվորներ, գյուղացիներ, կարմիր բանակայիններ՝ բոլորը պետք է համախմբվեն ընկ. Լենինի կուսակցության շուրջը։ Ռեկ (ր) գեկավարությամբ բանվորներն ու գյուղացիները պետք են նվիրվեն մեծ գործին—ընկ. Լենինի ավանդների երականացման գործին։

### 16. ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՎՃԱՆԳԻ

Իմպերիալիստական պետությունները միշտ ձգտում են նոր հողեր զբավելու։ Նրանց հարկավար են նոր հողերը (յերկրները) տեղացի ժողովուրդներին շահագործելու և կեղեքելու համար։ Իմպերիալիստական պատերազմի ժամա-

նակ ձեռք բերած թալանը բաժանելու հողի վրա, այլ և նոր թալաններ ձեռք բերելու տեսչի հետևանքով խոշոր կապիտալիստական պետությունների մեջ ընդհարումներ են տեղի ունենում։ Կապիտալիստական միասնականությունը խախտվում է, յերբ զանազան կապիտալիստական պետությունների շահերը բաղխվում են։ Իմպերիալիստական պետությունների մեջ թալաններու և կեղեքելու իրավունքի համար պայքարը լուծվում է պատերազմներով։ Անդիմայի ու Ֆրանսիայի, Ամերիկայի ու Յապոնիայի միջև զժոհությունները հասունանում են։ Բոլոր կապիտալիստական պետություններն սպառազինվում են նոր պատերազմների համար։ Սպառազինության ծախսերն աճում՝ մեծանում են։

Այսոր զենքի տակ զինվորների թիվը մեկ միլիոնով ավելի յէ, քան թե 1914 թ. պատերազմից առաջ էր։ Նշանավոր չափով ուժեղանում է սպառազինության տեխնիկան։ Անում, զարգանում են ողազացությունը (ավիացիան), պատերազմի քիմիական միջոցները, սուզանավատորմը, ահազին կործանիչ ու յժի թնդանոթների հեռաձգությունը։ Կապիտալիստական յերկրների սպառազինությունը նրանավոր չափով ուղղված է մեր զեմ։ ԽՍՀՄ

ամրանալը, կապիտալիստական յերկրներում կոմունիստական կուսակցությունների աճումը, գաղութների ազգային-հեղափոխական շարժումների աճումը, ամբողջ աշխարհի կեղծքվածների ու ձնչվածների համակրանքը դեպի ԽՍՀՄ, —այս բոլորը սաստկացնում են իմպերիալիստների ատելությունը և մեզ բնաջինջ անելու ցանկությունը: Մենք չենք ձգտում ուրիշների հողերը գրավելու, բայց պետք է պատրաստ լինենք ԽՍՀՄ պաշտպանության համար: Կարմիր Բանակը հենարան և բոլոր յերկրների կապիտալիստների դեմ, և պետք է նա տեխնիքապես կատարնագործվի:

## 17. ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ—ԼԵՀԱՍՏԱՆ, ՌՈՒՄԻՆԻԱ ՅԵՎ ՌԻՄԻՇՆԵՐԸ

Խորհրդային Միության արևմուտքից ու հյուսիսից սահմանակից են մի շարք կապիտալիստական պետություններ: Մեր ամենամոտ հարեաններն են՝ Լեհաստան, Ռումինիա, Լատվիա, Եստոնիա, Լիտվա և Ֆինլանդիա: Ռումինիայից զատ՝ մնոցած բոլոր պետությունները մտնում են ցարական Ռուսաստանի կազմի մեջ և միայն 1917 թ. հեղափոխությունից հետո յեն կազմվել: Այդ բոլոր յերկրներում տիրում է բուրժուազիան: Բանվոր դաստիարակությունը:

Հը և կլուղացիությունը ձնչված վիճակում են գոնվում: Մանավանդ ձնչվում են այն աշխատավորները, վորոնք տիրող ազգության չեն պատկանում: Այդպիսի ձնչման փայլուն որինակ տալիս ե Ռումինիան, վորը գաժանորեն ձնչում է՝ 1918 թվին Խորհրդային Ռուսաստանից խլած Բևարարիայի բնակիչներին: Խորհրդուստանն իր արևմտյան բոլոր հարեանների հետ խաղաղության դաշինք է կնքել, բացի Ռումինիայից:

Հայտառանի անմիջական հարեաններն են՝ Տաճկաստանն ու Պարսկաստանը: Այս յերկու յերկրումն ել համաշխարհային պատերազմից հետո ուժեղացել ե ազգային շարժումը, վորը հեղափոխական ձեւը և ընդունել:

Տաճկական սուլթանի և պարսկական շահի տապալումից հետո իշխանությունն անցավ տաճկական ու պարսկական ազգային բուրժուազիայի ձեռքը: Ապստամբած ժողովուրդը ստիպեց ոտարերկրյա հափշտակիչներին հաշվի առնել իր կամքը:

ԽՍՀՄ, Տաճկաստանի և Պարսկաստանի մը չեն բարեկամական հարաբերություններ են հաստատվել:

## 18. ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՄՆԵՐԸ

ԽՍՀՄ-ի աշխարհում միակ խորհրդային յերկիրն է: Բոլոր յերկրների բանվորներն ու աշխատավորները մեր լովազույն բարեկամներն են: Քաղաքացիական կովկի ժամանակ նրանք մեզ ողնում եյին, վոր մենք մեր թշնամիներին հաղթենք: Ներկայումս ստարերկրյա քանվորներն իրանց կապիտալիստական կառավարություններին ստիպում են, վոր ԽՍՀՄ ճանաչեն: Արեւլան ժողովուրդները, վորոնք պայքար են մզում իմպերիալիստների ձնչումների գեմ իրանց աղասապրության համար, նույնպես մեր բարեկամներն են: Միջազգային կազմակերպությունների միջոցով— կոմիտերն, կիՄ, Պրոֆինտերն, Պյուզացիական Խորհուրդ— մենք միացած ենք ամբողջ աշխարհի աշխատավորության հետ:

## 19. ՆԱԽԱԿԱՌՉԻԿԸ ՏԱՆՅ

Նախակառչիկը հավաքույթներում քիչ և լինում: Բոլոր այն սազմական և քաղաքական դիտելիքները, վոր ձեռք և բերում հավաքույթներում, հեշտությամբ կարող են մոռացվել, յեթե նա հավաքույթներից վերադառնալուց հետո՝ տանը չպարապի: Նախակառչիկը տանն առաջին հերթին պետք է սովորե գրագիտու-

թյուն: Իր անգրագիտությունը նա պետք է վերացնե լիկայաններում (անգրագիտության վերացման կայտներ): Ծագմական գործի, կարմիր Բանակի պատմության, կարմիր Բանակի կենցաղի յեղանակների՝ վերաբերյալ տեղիկություններ ձեռք բերելու համար՝ նախակոչչիկը պետք է հաճախի խրճիթ-ընթերցաբանն ու ուազմական անկյունը: Նախակոչչիկը ամեն բանում գիտակցականության և կորզապահության որինակ պիտի լինի:

Նա պետք է կապ ունենա ՌԿԿ (ք) բջիջի և կոմյերիամիության հետ և նրանց աջակցությամբ ու ստարությամբ, ուազմական անկյուններում և ուրիշ հաստրական կազմակերպություններում աշխատանքի ժամանակ, սովորի և պատրաստվի կարմիր Բանակի շարքերում ծառայելու համար:

ՆԱԽԱԿՈԶԻԿՆԵՐԻ  
ՔԱՂՊԱՐԱՊՄՐԻՆ ՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ  
ՆԱԽԱԳԻԾԸ՛ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ  
ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

1. Զինվորական ծառայությունն անցնելու  
կարգը.

2. Բնակազմային (կադրային) և յերկրա-  
յին զորամասեր.

3. Ի՞նչ են սովորում նախակոչիկները.

4. Առանց կարգապահության բանակ չկա.

5. Կարմիր բանակայինը, վորպես ԽՍՀՄ  
քաղաքացի.

6. Հրամանատար և կարմիր բանակային.

7. Արտօնություններ՝ կարմիր բանակա-  
յինների ընտանիքներին:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԽՍՀՄ-Ի ՊԱՀԱԿ

8. Ինչպես բանվորներն ու գյուղացիներն  
իշխանությունն առան իրանց ձեռքը.

9. Բանվորների և գյուղացիների միու-  
թյունը հիմքն է խորհրդային իշխանության

10. ԽՍՀՄ.

11. ԱԽՖՍՀ, ՈԽԽՍՀ, ԲԽՍՀ, ԱԽՖՍՀ,  
Աւզբեկ. և Թյուրքմեն. ԽՍՀ.

12. Կենտրոնակոմի ու ժողկոմիուրհի նա-  
խագահներ:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԿՐՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵԼ

13. Քաղաքացիական կռվի սկզբնավորու-  
թյունը և Կարմիր Բանակը.

14. Կարմիր Բանակի կազմակերպվելը.

15. Կուչակ.

16. Դենիկին.

17. Յուգենիչ.

18. Պատերազմ Լեհաստանի հետ ու Բարոն  
Վլանդել.

19. Կարմիր նավատորմ.

20. ՌԿԿ (բ) կարմիր Բանակում քաղաքա-  
ցիական կռվի ժամանակ և այժմ.

21. Կարմիր Բանակը խաղաղ վիճակում.

22. ՌԿԿ (բ) բջիջը զորամասում.

23. ՌԿԿՅԵՄ կարմիր Բանակում.

24. Ռուսաստանի կոմունիստական (բոլ-  
շևիկների) կուսակցությունը՝ Լենինի կուսակ-  
ցությունն եւ.

25. Բնկ. Լենինի մեծ ավանդները—ՌԿԿ  
(բ) խնդիրներն են:

ԽՍՀՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒՅԹՈՒՆԵՐԻ ՄԵՋ

26. Մեր թշնամիները — կալվաճառերեւ,  
կապիտալիստներ, կուլտկներ և համուշխար-  
հային կապիտալ.

28. Անգլիա և Ֆրանսիա.

29. Գերմանիա.

30. Իմպերիալիստական նոր պատերազմ-  
ների վատանգը.

36. Միլիոնարիզմի և ուղղմական անինի-  
կայի աճումը.

32. Պետք և դպոն լինել:

ԽԱՂԱՂ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱԲԺՈՒՄԸ

33. Կոմինտերն ու Գյուղինտերն.

34. Յերիտկոմինտերն (ԿիՄ).

35. Ազգային հեղափոխական շաբժման ա-  
ճումն արհելքում.

36. Նախակոչելիր ասնը:

Պ Բ Ա Գ Ի Պ

ՆԱԽՍԶՈՐԱԿՈՉՅԱՆ  
ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ  
1. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑ-  
ՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Կարմիր Բանակում ծառայում են միայն  
բանվորները և աշխատավոր գյուղացիները:  
Կուլտկները, առետրականները, միջնորդները  
և բոլոր նբանք, վորոնք զրկված են խորհուրդ-  
ների համար ընտրելու և ընտրվելու իրավուն-  
քից, Կարմիր Բանակի շարքերում տեղ չունեն:  
Ընդհանուր զինվորական պարտականությունն  
աշխատավորությունը կատարում է 16 տարե-  
կանից մինչև 40 տարեկան հասակը: Այդ ժա-  
մանակամիջոցը բաժանվում է այսպես. 1. Նա-  
խակատրաստական նախաղորակոչյան պատ-  
րաստություն, 2. Նախազորակոչյան պատրաս-  
տություն, 3. Խոկական ծառայություն, 4.  
պահեստում յեղած ժամանակ: Նախազորա-  
կոչյան պատրաստությունը բովանդակ բանվո-

բագյուղացիական յերիտասարդությունն անցնում է գյուղի և գործարանի մոտ:

Կարմիր բանակ կանչվածները ծառայում են կամ բնակազմային մասերում կամ յերկրային: Բնակազմային մասերում ծառայում են հետեակ զորքի մեջ, հրետանու մեջ տեխնիկական զորքերում 2 տարի, ավիացիայում ծառայում են 3 տարի, նավատորմում՝ 4 տարի: Յերկրային զորամասերում բնակազմի կարմիր բանակայինները ծառայում են 2-ական տարի, իսկ փոփոխականները 8 ամիս՝ 5 տարվա ընթացքում: Բնակազմային և յերկրային զորամասերում իրանց ծառայության ժամանակը լրացնողները համարվում են պահանջման մեջ մինչեւ 40 տարեկան հասակը:

## 2. ԲՆԱԿԱԶՄԱՅԻՆ ՑԵՎ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐ

Աշտական մեծ բանակը թանկե նստում և ծանրաբեռնում ե աշխատավորությանը: Զինվորական ծառայությունը թեթևացնելու և կարմիր բանակի պահելն եժանացնելու համար՝ կարմիր բանակայինների մի մասը ուղղմական պատրաստությունն անցնում է յերկրային զորամասերում: Նրանք այս զորամասե-

րում ծառայում են 5 տարվա ընթացքում 8 ամիս: Մնացած բոլոր ժամանակ փոփոխական կազմի կարմիր բանակայիններն արձակվում են տուն և կարող են իրանց տնտեսությամբ զբաղվել: Հինգ տարվա ընթացքում մինչեւ բոլոր հավաքույթների վերջանալը փոփոխական կազմի կարմիր բանակայինները իսկական ծառայության մեջ են համարվում: Զինվորական ծառայության այդպիսի թեթևությունն առաջման անհնար և տալ բոլոր աշխատավորներին: Սահմանների պահպանության և պատերազմի համար մշտապես պատրաստ լինելու համար՝ անհրաժեշտ են բնակազմային զորամասեր: Աւստի և ներկայումս ամբողջ կարմիր բանակն անկարելի յե վերածել յերկրային սիսակմի, գրա համար ել յերկրային զորամասերի հետ միասին գոյություն ունի նաև բնակազմային կարմիր բանակը:

## 3. Ի՞՞ՆՉ Ե՞Ն ՍԱՎՈՐՈՒՄ ՆԱԽԱԿՈԶԻԿՆԵՐԸ

Նախազորակոչչան պատրաստությունը՝ ուղղմական գործի ուսուցման առաջին աստիճանն է: Նախակոչիկները հավաքույթների ժամանակ սովորում են ուղղմական զործը և հմտություն են ձեռք բերում զենք բանեցնելու

մեջ, նույնպես և ստանում են քաղգրագիտություն:

Նախազորակոչյան պատրաստությունը թեթևացնում և կրծատում է կարմիր բանակում ծառայելու: Նախակոչիկները ծանոթանում են կարմիր Բանակի բոլոր կանոնադրություններին, վոր կարմիր Բանակ կոչված ժամանակ նրանք պատրաստված լինեն զինվորական ծառայությունը տանելու: Առանց նախապատրաստական վարժությունների՝ չափազանց ծանր կը լինի կարմիր Բանակում ծառայելը: Նախակոչիկներն անցնում են նաև հրաձգություն վարժությունները, սովորում են հրացան արձակել և զենք բանեցնել: Նախակոչիկներին գրագիտություն սովորեցնում են նախ քան հավաքույթները անգրագիտության լիկայաններում: Նախակոչիկը գորակոշի ժամանակ պետք է սովորած լինի գրել, կարգալ և հաշվել: Թե՛ հավաքույթների ժամանակ և թե՛ հավաքույթներից գուրս նախակոչիկը անցնում է քաղաքական գրագիտություն: Նրանք ծանոթանում են, թե ինչպես և ստեղծվել կարմիր Բանակը, թե ինչպես են բանվորներն ու զյուղացիներն իշխանությունն իրանց ձեռքն առել, ի՞նչպես ե կառուցված մեր ԽՍՀՄ, ինչպես և դեկազրում մեկ (Բ) բանվոր դասակարգի և

գյուղացիության միությունը: Նրանք ընտելանում են լինել Կարմիր Բանակի կարգապահ մարտիկներ:

#### 4. ԱՌԱՆՑ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿ ԶԿԱ

Գյուղական ամեն մի ընտանիքում և տընտեսության մեջ գոյություն ունի կարգ-կանոն: Վորքան տնտեսությունը խոչը և, այնքան ել նրանում կարգ-կանոն չափ պետք է լինի: Կարգ կանոնը զես ավելի խիստ է գործարանում, վորակը բոլոր համբարություններն աշխատում են միևնույն պլանով: Այսպիսի կարգն անվանվում է դիսցիպլին-կարգապահություն: Ռազմական գործում կարգապահությունն ավելի կարեսոր է, ավելի հարկավոր է, քան թե մի այլ տեղ: Կարմիր Բանակում կարգապահությունը այն է, վոր պետք է հնազանդվել այն որևէնքնիւրին, վոր հրատարակում է բանվորացյուղացիական իշխանությունը, պետք է պահպանել զինվորական ծառայության կանոնները, պետք է անշեղ կատարել զինվորական պարտականությունները և բանվորացյուղացիական իշխանությունների և բանվորացյուղացիական իշխանության կողմից կարգված հրամանադրաների և կոմիսարների հրամանները: Կարգապահությունը կարմիր Բանակում հարկություր է նրա համար, վոր բոլոր կարմիր բանա-

կայինները, հրամանատարները և քաղաքատարներն գործեն ինչպես մի մարդ։ Բանակում կարգը կարող է պահպանվել միայն այն ժամանակ, յերբ ամենքը ճշտությամբ կատարեն խորհրդային իշխանության կարգած հրամանատարների հրամաններ։

Կարմիր բանակում կարգապահությունը հիմնված է աշխատանքի կանոնավոր բաշխման և կանոնավոր զեկավարության անհրաժեշտության վրա։ Կարգապահության անհրաժեշտությունը պարզ է մասնավանդ պատերազմում։

Մարտի հաջողությունը կախված է հրամանանների ճիշտ և անառարկելի կատարումից։ Մեկ կարմիր բանակայինի կողմից հրամանը չփառարելը՝ կարող է փշացնել ամբողջ գործի հաջողությունը և բազմաթիվ մարտիկների կորսույան պատճառ լինել։ Նախակոչիկները պետք է առաջին իսկ որդիանից սովորեն կատարել հրամաններ և կարգապահ լինել։

### 5. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅՅԻՆԸ, ՎՈՐՊԵՍ ԽՍՀՄ-Ի ՔԱՂԱՔԱՅԻ

Հին ցարական բանակում դինվորը վուշ մի իրավունք չուներ։

Կարմիր բանակում ամեն մի կարմիր բանակային ԽՍՀՄ-ի քաղաքացի յի։ Նա վայելում

է քաղաքացու բոլոր իրավունքները։ Նա համահավասար բոլոր աշխատավորների հետ՝ ընտրում է խորհուրդների համար և ինքն ել կարող է ընտրվել։ Կարմիր բանակայինը Միության քաղաքական կյանքի մեջ մասնակցություն ունի։ Գնդի և վաշտի ընդհանուր ժողովներում նա քննության և առնում խորհրդային հանրապետության, իր զորամասի կյանքի բոլոր հարցերը։ Գրագետ և քաղաքանապես զարգացած կարմիր բանակայինը, վորը ցանկություն ունի ազնվարար ծառայելու աշխատավորության ազատագրության գործին, կարող է մտնել ՌԿԿ և ՌԼԿՅՄ-ի մեջ։

### 6. ՀՐԱՄԱՆԱՑԱՐՆ ՈՒ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅՅԻՆԸ

Ցարական բանակում սպաները գլխավորապես լինում եյին ազնվականները։ Զինվորները համարվում եյին ստորին աստիճանի (ԱՊՀՀ, ՊԱՀ) ծառայողներ, վորոնք վոչ մի իրավունք չունեյին։ Կարմիր բանակում հրամանատարն ու պետը նույն բանվորն ու գյուղացին ե։ Կարմիր բանակի հրամանատարը պարտավոր է հարզել Կարմիր բանակայինի անձնավորության մեջ քաղաքացուն։ Նա խիստ է ծառայության նկատմամբ՝ որենքի և կանոնադրության սահմանում։ Ցարական բանակում հասարակ գինվորը

(ԱԿՀԱ. ՎԱ) չեր կարող հրամանատար դառնալ: Կարմիր Բանակում ուղամական դպրոցներում ամեն տարի բնդունվում են կարմիր բանակայինները, և այն աեղից դուրս են գալիք բանվորացյուղացիական կարմիր Բանակի հրամանատարներ:

### 7. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՑԻՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Զինվորական ծառայության կոչված կարմիր բանակայիններին խորհրդացնեն իշխանությունը տալիս և մի շարք արտօնություններ: Այդ արտօնությունները նախատեսված են 1924 թվականի հոկտեմբերի 29-ի որենսգրքում: Առաջին հերթին արտօնություններ արվում են զյուղատնտեսական միասնական հարկի նկատմամբ: Արտօնություններ են արվում նաև աշխատավորական հողոդադործման, ժողովրդական լուսավորության, սոցիալական ապահովագրության նկատմամբ: Կարմիր բանակայիններն ազատվում են մի շարք հարկերից և տուրքերից, վորոնք նախատեսված են արտօնությունների որենսգրքի մեջ:

### ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՎՈՐՊԵՍ ՊԱՀԱԿ ԽՈՀՄ-Ի

8. ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐՆ ԻՆՉ-  
ԳԵՍ ԵՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԶԵՄՐԻՆ  
ԱՌԵԼ

Հեշտ չեր բանվորների և գյուղացիների համար ստեղծել իրանց պետությունը և իրանց կարմիր Բանակը: Բանվոր դասակարգը յերկար տարիներ ծանր պայքար մղեց և բազմաթիվ զոհեր տվավ: Միայն 1917 թ. փետրվարին ապատամբաված գյուղացիներն ու բանվորները տապալեցին Նիկոլայ 2-ի արյունոտ ինքնակալությունը: Դրանով չվերջացավ իմպերիալիստական պատերազմը, վորին մասնակցում եր նաև Ռուսաստանը: Վորովչեաև բանվորները բավարար չափով չեյին պատրաստված և չեյին կաղմակերպված, իշխանությունն անցավ բուրժուազիային: Բուրժուական կառավարությունը չըկարողացավ և չկամեցավ պատերազմին վերջ գնել և պատերազմի հետեանքով ավերված յերկրին խաղաղություն և հաց տալ:

Բանակը նորից կովի մեջ ձգեցին ոռւս և ուսարազգի կապիտալիստների շահերի համար: Կապիտալիստները շարունակում եյին շահործել և կեղեքել բանվորներին: Հողը մնում եր

կալվածատերերի ձեռքին։ 1917 թվականի հոկտեմբերի 25-ին Լենինգրադի ապաստամբած բանվորները, նավաստիները և զինվորները, ՌԿԿ (Բ) ղեկավարությամբ ընկ։ Լենինի գլխավորությամբ՝ տապալեցին Կերենսկու բուրժուական կառավարությունը և ստեղծեցին խորհուրդների իշխանությունը։ Բանվորներն ու գյուղացիները նման ապաստամբություններ բարձրացրին ամբողջ յերկրում։

#### 9. ԽՈՐՀՔԱՅՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՑՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՏՈՒՄ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խուսաստանում խորհրդային իշխանությունը հաստատվելուց հետո՝ Անդրկովկասի հականեղափոխականները, դաշնակցականների, մենշևիկների և մուսաֆատիստների առաջնորդությամբ Անդրկովկասը անջատեցին հեղափոխական Խուսաստանից։ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեյջանի բանվորները, կոմունիստների առաջնորդությամբ կատաղի կոիկներ մղեցին այդ հականեղափոխական կուսակցությունների գեմ, մինչև վոր Անդրկովկասն ել խորհրդային յերկիր դարձավ և իր հոժար կամքով մտավ Խ.Ս.Հ. Միության մեջ։

Ադրբեյջանի խորհրդայնացումը տեղի ունեցավ 1920 թ. ապրիլի 29-ին, Հայաստանինը՝

1920 թ. նոյեմբերի 29-ին, իսկ Վրաստանինը՝  
1921 թ. փետրվարի 25-ին։

Հայաստանի խորհրդայնացումից առաջ, յերկրի իշխանությունը գտնվում էր խմբապետական գաշնակցական կուսակցության ձեռքին։ Դաշնակների որոք Հայաստանի աշխատավորները ծայր աստիճան աղքատացել եյին և ուժասպառ յեզել անվերջ կոիկներից։ Դաշնակները միշտ պատերազմներ եյին մզում իրանց հարեանների՝ վրացիների, թուրքերի և տաճիկների գեմ։ Այդ պատերազմների հետևանքն եր լինում ոռվ, զաղթականություն և հիվանդություններ։ Ամբագետները իրենց ուղած ձեմով թալանում և ահաբեկում եյին ժողովրդին։ Դպրոցները փակ եյին, Հայաստանը կորված եր արտաքին աշխարհից և ըրջապատված թշնամիներով։ Աշխատավորների գրությունը անտանելի յեր։ Այդ պատճառով 1920 թ. մայիսին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ապաստամբություն բարձրացրին Լենինականում, (նախկին Ալեքսոլով) Նոր Բայազետում, Դիլիջանում, Կարսում և մի շարք այլ վայրերում և պահանջեցին հաստատել խորհրդային իշխանություն։ Բայց բոլոր այդ շարժումները գեռ լավ կազմակերպված չեյին, դրա համար ել դաշնակներին հաջողվեց ժամանակավորապես

Ճնշել ապստամբությունը։ Նրանք կնդակահամարեցին և բանտարկեցին Հայաստանի աշխատավորության լավագույն ներկայացուցիչներից շատերին։

Հայաստանի բանվորների և գյուղացիների գրությունը ամելի ես վատացավ և նույն 1925 թվի նոյեմբերին Ղազախի աշխատավոր գյուղացիությունը նորից ապստամբվեց դաշնակների գեմ։ Հեղափոխական գյուղացիներին ողնության համավ Կարմիր Բանակը և նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեց խորհրդադային իշխանություն։

#### 10. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԴՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՔՆ Ե ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ մեր յերկիրը կտառավարում են բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդները։ Խորհրդներին ընտրում են միմիայն աշխատավորները։ Կուլակները, անհարականները, նեպմանները խորհրդագների համար ընտրելու և ընտրվելու իրավունք չեն վայելում։ Աշխատավոր կանայք և աշխատավոր գեղջիւնները բանվորների գյուղացիների հետ համակատար նույն իրա-

վունքներն են վայելում։ Խորհրդային պետության մեջ ամենապատասխանատու պաշտոնների գլուխ են անցած առաջավոր անկուսակցական բանվորներ և գյուղացիներ և նրանց լավագույն ներկայացուցիչները՝ շահագործողների գեմ բազմամյա պայքարում փորձված կոմունիստները (բոլշևիկները)։ Բանվորների և գյուղացիների միությունը խորհրդային իշխանության հիմքն է կազմում։ Միայն այդ միության չորսիվն եր, վոր հաջողվեց դուրս քշել կալվածատերերին և կապիտալիստներին և մեր յերկիրը պաշտպանել սովարելիրյա և սպիտակ բանակներից։ Բանվորների և գյուղացիների սերտ միությունը՝ կուսակցության զեկավարությամբ, գուրս քշեց սոլոր պարավիտաններին և բոլոր Փարբիկները, զործարանները, հողերն ու անտառները հանձնեց աշխատավորության պետության ձեռքը։

Միայն բանվորների և գյուղացիների սերտ միության հետեւնքով և, վոր վերականգնում և մեր յերկիրի անտեսությունը։

#### 11. Խ. Ա. Հ. Մ.

Խորհրդային իշխանությունը հիմնված է մեր յերկրում ընտեկվող բոլոր ժողովուրդների բանվորների և գյուղացիների միության վրա։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական տէրիտորիայի վրա կազմակերպվել են առանձին խորհրդային հանրապետություններ։ Այդ հանրապետությունները քաղաքացիական կովի տարիներում միատեղ կովում եյին բնդհանուր թշնամիների գեմ—ռուսական և ռուսացի կապիտալիստների և կալվածատերերի գեմ։ Խորհուրդների 10-րդ համագումարում, վոր կայացավ 1922 թվականին, այդ առանձին խորհրդային հանրապետությունները միացան և կազմեցին խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն։ Միությունն ստեղծվել է կապիտալիստական թշնամիների գեմ միասնական խորհրդային բառնցք ունենալու համար, նույնպես և առանձին հանրապետությունների փոխադարձ տընտեսական ոգնության համար։ Կարմիր Բանակը, արտաքին քաղաքականությունը, արտաքին առետուրը, յերկաթուղիները և ֆինանսները միացած են բովանդակ Միության մասշտարով։

ԽՍՀ Միության կազմի մեջ մտնում են ՌԽՖՍՀ, ՌԽԽՍՀ, ԲԽՍՀ, ԱԽՖՍՀ, Ռւգբեկների և Թյուրքմենների ԽՍՀ։

12. ՌԽՖՍՀ, ՌԽԽՍՀ, ԲԽՍՀ, ԱԽՖՍՀ, ՌԽՁԲԵԿ ՅԵՎ ԹՅՈՒՐՔՄԵՆ ԽՍՀ  
ՌԽՖՍՀ—ամենից արդյունաբերական հան-

րապետություններ։ Այսաեղ են գանվում բանվորական գլխավոր կենարունները (Լենինգրադ, Մոսկվա, Իվանովո-Վոլոգնեսենսկ), Ռւբալ և այլն։ ՌԽՖՍՀ կազմի մեջ մտնում են ինքնավար (ավտոնոմ) հանրապետություններ և չբջաններ (Բաշկիրական, Թաթարական, Լեռնային Բուրիատ-Մանգոլական, Չուվաշական և ուրիշները)։ Բոլոր հանրապետությունները, վորոնք մտնում են ԽՍՀՄ կազմի մեջ, առաջ ցարական միության մի մասն եյին կազմում և ճնշվում, կեղեքվում եյին ցարական կառավարության և բուրժուազիայի ձեռքով։ Խորհրդային իշխանության որոք ամեն մի հանրապետություն հրնարավորություն և ստացել ինքնուրույն կերպով զարդանալու և ոգտվում ե ամբողջ ԽՍՀՄ աշխատավորության յեղայրական աջակցությամբ։ Խորհրդային կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում ԽՍՀՄ-ի հետամնաց ժողովուրդների անտեսության զարգացման, կուլտուրական մակարդակը բարձրացնելու վրա։

### 13. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՑԱՆ ՍՖԽՀ

ԱՍՖԽՀ անվան տակ 1922 թվին միացել են յերեք հանրապետություն՝ Վրաստանի, Աղբարեջանի և Հայաստանի հանրապետությունները։

Այս հանրապետությունները 1918 թվին մենչելիների, մուսավատների և գաշնակների ղեկավարությամբ անջատվեցին Խորհրդային Թուսաստանից և բուրժուական կառավարություններ կազմեցին։ Կրկին բոնկվեցին ազգային թշնամություն, ջարդեր, կոտորած, հայ-վրացական պատերազմ (1919 թվին)։

Մենչելիները կանչեցին անդլիացիներին, վորոնք շահագրգոռված ելին կովկասի հարստություններով (Նավթը)։ 1920 թվին Անդրկովկասի աշխատավորները տապալեցին անդլիացիներին, մենչելիներին, դաշնակներին և մուսավատներին և Խորհրդային իշխանություն հաստատեցին։ Միայն այդ ժամանակվանից սկսվեց այդ հարուստ յերկրի վերականգնումը, և Անդրկովկասի ազգությունների միջև խաղաղություն հաստատվեց։ ԽՍՀՄ շատ և ոգինում Անդրկովկասի ազգային հանրապետությունների տնտեսական և կուրտուրական վերածնութիր, վորոնք առաջ ձևված ելին ցարական կտորավարության և ապա մենչելիների ձեռքով։ 1921 թվի փետրվարին դաշնակները և 1924 թվին մենչելիները փորձեցին Խ. իշխանության զեմ ապստամբություն բարձրացնել Վրաստանում և Հայաստանում, բայց՝ անհաջող։

#### 14. ԽՍՀՄ ՅԵՎ ՀՅԻՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՃԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ

ԽՍՀՄ կենտգործկոմի նախագահ Միխայիլ Իվանովիչ Կալինինը Տվերի նահանգից է։ Նա գյուղացիական ծագում ունի։ 15 տարեկան հասակից սկսած ընկ. Կալինինն սկսել է աշխատել գործարաններում։ 1899 թվից ընկ. Կալինինն սկսել է պարապել հեղափոխական գործով։ Ցարական կառավարության կողմից նա շատ անդամ յինթարկվել է հարածանքների, նստել է բանտում, յեզել է աքսորում։ Ընկ. Կալինինն իր ամբողջ կյանքը նվիրել է աշխատավորության ազատագրության գործին։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ ընկ. Կալինինը մի շարք պատասխանատու պաշտոններ և վարել, իսկ ընկ. Սվերդլովի մահից հետո ընտրվել է Համառուսական Կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախագահ։ ԽՍՀՄ կազմակերպվելուց հետո՝ նա շարունակ ընտրվում է ԽՍՀՄ կենտգործկոմի նախագահ։

ԽՍՀՄ Ժողկոմի խորհի նախագահ Ալեքսեյ Իվանովիչ Ռիկովը Վլատկայի նահանգի մի գյուղական ընտանիքի զավակ է։ Իր վարժուհի քրոջ չնորհիվ նա կարողացավ գիմնազիա մըսնել։ Փոքր հասակից ընկ. Ռիկովը մասնակ-

ցում եր հեղափոխական շարժման մեջ։ Նա նույնպես յենթարկվել է ցարական կառավարության հալածանքներին։ Նա 7 տարի ու կես անց է կացրել բանտերում և մի քանի տարի ել՝ աքսորում։ 1905 թվից ընկ. Ռիկովը շարունակ ընտրվում եր բոլշևիկների կենտրոնական կոմիտեյի անդամ։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ ընկ. Ռիկովը վարում եր ներքին գործերի ժողովրդական կոմիսարի պաշտոնը։ 1921 թվին ընկ. Ռիկովը նշանակվում է Փողկոմիորհի նախադահի փոխանորդ (ընկ. Լենինի փոխանորդ)։ Ընկ. Լենինի մահից հետո՝ ընկ. Ռիկովն ԽՍՀՄ Փողկոմիորհի նախադահ ընտրվեց։

### ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՀԻ

Հայաստանի ՍԽՀ կենտրոնակոմի նախադահ ընկ. Արտաշես Կարինյանը ծնվել է 1885 թվին Ղարաբաղի Դիզակի շրջանի Զամզար գյուղում։ Ավարտել է Շուշիա ու յալական գյուղոցը և 1901 թվին մտնում է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը։ Ցարական կառավարությունը նրան յերկու անգամ հեռացնում է համալսարանից ուսանողական հեղափոխական շարժումներին մասնակցելու համար, և միայն 1909 թվին նրան հաջողվում է ավարտել բժշկական ֆակուլտետը։ Ուսանողություն տարիներից նա հեղափոխական աշխատանք է վարում։ Մինչև 1920 թիվը ընկ. Համբարձումյանը աշխատում է Շուշում։ Նա մի կողմից կրովում է դաշնակների և մյուս կողմից ցարական իշխանության դեմ և չարունակ կապ է պահում

1917 թվին ընտրվում է կոմիտուսի կենտրո-

մի անդամ։ Մոտեվան Շահումյանի ժամանակ վարում է արդարադատության Փողկոմի պաշտոն։ Անդրկովկասյան խորհուրդների առաջին համագումարում ընտրվում է Անդրկովկասյան կենտրոնի անդամ։

1925 թվի հունիսի 22-ին ՀՍԽՀ Կենտրոնակոմի յերկրորդ նստաշրջանն ընկ. Կարինյանին ընտրում է ՀՍԽՀ Կենտրոնակոմի նախադահ։ Նա անդամ է նաև Խորհրդային Միության ազգությունների խորհրդի։

ՀՍԽՀ Փողկոմիորհի նախադահ ընկ. Ա. Համբարձումյանը ծնվել է 1880 թվին Լեռնացին Ղարաբաղի Դիզակի շրջանի Զամզար գյուղում։ Ավարտել է Շուշիա ու յալական գյուղոցը և 1901 թվին մտնում է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը։ Ցարական կառավարությունը նրան յերկու անգամ հեռացնում է համալսարանից ուսանողական հեղափոխական շարժումներին մասնակցելու համար, և միայն 1909 թվին նրան հաջողվում է ավարտել բժշկական ֆակուլտետը։ Ուսանողություն տարիներից նա հեղափոխական աշխատանք է վարում։ Մինչև 1920 թիվը ընկ. Համբարձումյանը աշխատում է Շուշում։ Նա մի կողմից կրովում է դաշնակների և մյուս կողմից ցարական իշխանության դեմ և չարունակ կապ է պահում

բոլշեվիկական տէնեղալ կազմակերպության հետ։ 1921 թվին նա նշանակվում է Առժողկոմ։ 22 թվին ընտրվում է Հայաստանի Կենտղործկոմի նախագահ։

1925 թվին ընտրվում է Ժողկոմի խորհրդական։

Բնկ։ Համբարձումյանն անդամ և Համամի բութենական Գործկոմի, Անդր. Սմիջ Գործկոմի և Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի։

## ԿՈՐՍԻՐ ԲԱՆԱԿԻ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՎՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

### 15. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՎՀԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԳՎԱՐԴԻԱՆ

Կապիտալիստները, կարվածատերերը և ցարական գեներալները չելին կարող հաջոտ աչքով նայել բանվորների և գյուղացիների իշխանության գոյության վրա, այն բանվորների և գյուղացիների, վորոնք խլել ելին նրանց իշխանությունը, հողը, Փարբիկներն ու գործարանները։ Կապիտալիստները, գեներալները և կարվածատերերն սկսեցին ցարական սպաներից, յունկերներից ու կուրտիներից զինվածութեղծել, վոր խորհրդային իշխանությունը տապալին և նախկին կարգերը վերականգուածության մեջ առաջանաւ։ Այս պատճենությունը առաջանաւ 1917 թվականի հունվարի 23-ին Կապիտալիստական պատճենությունը առաջանաւ 1917 թվականի մայիսի 25-ին։

Նեն։ Համաշխարհային կապիտալն ոգնում եր ուստական սպիտակ գվարդիականներին։

Յերիտասարդ Խորհրդային Հանրապետությունը՝ իր գոյության առաջին իսկ որից սկըսած ստիպված եր գիմանալ սպիտակ գվարդիականների զինված ուժերի գրոհներին։ Յերիտասարդ խորհրդային հանրապետության առաջին զինված ուժը կարմիր գվարդիան եր։ Բանվորական կարմիր գվարդիան՝ փետրվարյան հեղափոխությունից հետո սկսեց միանգամբից կազմակերպվել Լենինգրադի և ապա մյուս քաղաքների գործարաններում և ֆարբեկներում։ Հոկտեմբերյան հեղաշրջումի ժամին՝ արգեն գոյություն ունեցին կարմիր գվարդիայի բավական բազմաթիվ ջոկատներ, վորոնք կազմված ելին բանվորներից, կամավորներվածատիներից և զինվորներից։

Կարմիր գվարդիան հոկտեմբերյան հեղափոխության մեջ գործոն մասնակցություն ունեցավ, նա ջարդեց Կերենսկու ջոկատները և հարավարեկըում հաջողությամբ կռիվ եր մղում կալեգինի և կրասնովի զեմ։

### 16. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱՂԱՔԱԿԵՐՊԵԼԻ

Խորհրդային իշխանության թշնամիների ուժերը մեծանում ելին։ Եսերները և մենչեւիկ-

Աերը՝ Վիլհելմի դերմանական բանակը Ուկրայնայի գեմ հրավիրեցին։ 1918 թվականի մայիսի 13-ին ոտարազգի կապիտալիստների և Եսերների զեկավարությամբ Սիբիրում և Մերձվորքան ըրջանում չեխո-սլովակների գորամաների ապատամբությունը բարձրացավ։ Լավ մարդկած ու զինված բանակների առաջ չկարողացավ գեմ կենալ սակավաթիվ, վաս զինված, վատ մատուկարարված կարմիր գվարդիան։

Կարմիր գվարդիան հաղթում եր իր անձնագոհությամբ, իր հեղափոխական թափով, սակայն նո քիչ եր կարգապահության ընտելոցած, ուներ բնուրովի պետք, չուներ հին զինվորական կազմակերպություն։ Թշնամիների ուժեղ և բազմաթիվ բանակների գիմաց հարկավոր եր ուժեղ, բազմաթիվ, կարդապա։ Կարմիր Բանակ՝ միասնական հրամանատարությամբ և խիստ կենարոնացած վարչությամբ։ Կարմիր Բանակ կազմակերպելու գեկրեալ հրատարակվել է 1918 թվականի փետրվարի 23-ին։ Նույն թվականին մի քանի անդամ աշխատավորների զորահավաք յեղափակմիքը Բանակի համար։ Թշնամիների հարվածների տակ աճում և ամրանում եր բանի բարկացուածքի վագագիւական կարմիր Բանակը։

## 17. ԿՈՂԶԱԿ, ԴԵՆԻԿԻՆ ՅԵՎ ՅՈՒԴԵՆԻԶ

Կարմիր Բանակն իր առաջին խոչոր հաղթանակը տարավ Արևելյան ճակատում՝ չեխո-սլովակների և սպիտակ գվարդիականների միացյալ ուժերի գեմ կովելիս։ Սպիտակներից մաքրվում եր Ուրալը։ Սակայն հենց այդ միջոցին յերեան և գալիս մի նոր ուժեղ թշնամի։ Եսերների, մենշևեկների ոգնությամբ և ոտարազգի կապիտալիստների ցուցումներով՝ ցարական ծովակալ Կոլչակը Սիբիրում կազմակերպում է բանակ։ Կոլչակի բանակում խրմբվեցին սպիտակ սպաներ, կազակներ, կուլակների զավակներ, չեխո-սլովակների բանակի մնացորդներ և բոնի զորահավաքի յենթարկված գյուղացիներ։ Անդին և Ֆրանսիան Կոլչակին փող և զենք ելին հայթայթում։ 1919 թ. գարնանը Կոլչակը մոտենում եր Վոլգային, սակայն աճած և ամրացած Կարմիր Բանակը անցնում է հարձակման և 1919 թվականի բնթացքում ջարդուփշուր և անում Կոլչակի բանակը։ Կոլչակի բանակի վոչնչացնելուն շատ են նպաստում Սիբիրի ապստամբած գյուղացիները։ Իրան՝ Կոլչակին 1920 թվի սկզբին Իրկուտսկում գնդակահար արեցին համաձայն զինվորական տրիբունալի դատավճորի։ 1919 թվա-

կանը խորհրդային իշխանության համար կովկամենածանը տարին եր: Կոլչակի դեմ կոփի մղելու անհրաժեշտությունն, ստիպեց, վոր խորհրդային իշխանությունն իր ուշագրությունն ու ուժերը հեռացնի հարավային ճակատից, վորտեղ այդ միջոցին ցարական դենքալ Դենիկինը կարողացել եր համախմբել և կազմել «կամավորական բանակ»: Այդ բանակը կազմակերպված եր Կուրանի ըրջանում՝ սպաներից և կուլակ կաղակներից. բանակն անցնում է հարձակման և, լավ սպառազինված ու մատակարարված Անդլիայի և Ֆրանսիայի ձեռքով, կարողանում է Աւկրայնան նվաճել: Մաինոյի, Գրիգորյեկի գտվածանությունն ու Պետլյուրովցիների հարձակումը հեշտացնում էն Դենիկինի գործը՝ Խորհրդային Ռուսաստանի խորքերն առաջանալու: Դենիկինի բանակը, վոր աճել եր ի հաշիվ բոնի զարահավաքի յենթարկված բնակիչների, զրավում և նրբու քաղաքը և մասենում եր Տուլյային: Յերկրի, և առաջին հերթին կոմկուսակցության, բոլոր ուժերի վերապույն լարաւմով՝ Կարմիր հեծերազարդ կազմակերպությամբ՝ 1919 թվականի վերջին Դենիկինի բանակը ջարդվեց: Նրա մնացորդները փախան Ղրիմ:

Այն ժամանակ, յերբ Դենիկինն իր հարձա-

կումներն ուղղել եր Մոսկվայի վրա, ցարի գեներալ Յուդենիչը արշավում եր Լենինգրադի վրա: Սրա բանակը նույնպես, կազմված եր սպաներից և փախած սպիտակ գվարդիականներից, սպառազինված և մատակարարված եր ոտարազգի կապիտալիստների ոգնությամբ: Լենինգրադի պրոլետարիատը դուրս յեկավ կարմիր մայրաքաղաքը պաշտպանելու: Հեղափոխանակ վոգեորությունը, վոր կար բանվորների, կարմիր բանակայինների և կուրանաների մեջ, վորոնց զեկավարում եր ՌԿԿ (Բ), մի քանի որում վերջ տվեց Յուդենիչի բանակին: Յուդենիչի սպիտակ բանակի մանր մնացորդները փախան արտասահման:

#### 18. ՊԱՏԵՐԱԶՄ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՅԵԿԱԾԱՐՈՒՆ ՎՐԱՅԻԳԵԼ

Սպիտակ գվարդիական Դենիկինի, Յուդենիչի, Կոլչակի բանակները ջախջախվելուց հետո՝ իմպերիալիստական պետությունները պանական Լեհաստանը մեր զեմ հանեցին, միաժամանակ ձեռք զարկելով բարոն Վլանգելին Հրիմում ամբացնելու գործին: 1920 թվականի մայիսին սպիտակ լեհերն անսպասելի հարձակմամբ դրավում են Կիյեվը: Չնայելով՝ վոր կարմիր բանակը յերկարաժամկե

կոխվներից հետո հոգնել եր, բայց և այնպես անցնում է հարձակման և լեհերին կիյեփ դուրս քչելով՝ հասնում է մինչեւ Վարշավա Այդ ժամանակ Վրանգելն ոկտում է հարձակման դիմել։ Խորհրդային կառավարությունը լեհաստանի հետ հաշտություն և կնքում կարմիր Բանակը շարժում է Բարոն Վրանգել դեմ։ Բարոն Վրանգելի բանակը կազմված է Դենիկինի բանակի մնացորդներից՝ Փրանսիական փողով։ Բնկ. Ֆրունզեյի առաջնորդությամբ ջարդ ու փշուր յեղավ ոռու սպիտակվարդիականության խղճուկ մնացորդը։

19. Կ. Կ. ԲԱՆԱԿԻ ՅԵՎ. ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻ. ԶԻՄՅԻ ՀԱՄԱԹՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

11-րդ Բանակն ողնություն ցույց տվել Անդրկովկասի բանվորներին և գյուղացիներին։

Բագվի բանվորների առաջին իսկ կանչը 11-րդ բանակի զորամասերը դեպի Բագուշարժեցին, ուր և հասան 1920 թվի ապրիլ 27-ին։ Մուսավատների ապստամբությունների վերջնական ձնշումից հետո բանակի համահանդայան ժամանակ յեկավ։ Այդ ժամանակ կում եր կազմակերպված Աղբբեջանի Կարմիր բանակը։

Հայաստանի Ղազախի գյուղացիների կանչը ովկ 11-րդ բանակն ողնության յեկավ Հայաստանի աշխատավորությանը և ողնեց տապարելու գաշնտկների լուծք։

Մենչեիկական կառավարության գործ դրած ուղղվեսիվ միջոցները ստիպեցին Վրաստանի ապստամբած բանվորների և գյուղացիների առաջանահան դիմել 11-րդ Կարմիր Բանակի ողնությանը, վորի աջակցությամբ Վրաստանի բանվորներն ու գյուղացիները խորհրդադրվելին իշխանություն հայտարարեցին։

Դրանից հետո 11-րդ բանակը չուտով վերանվանվեց Առանձին Կովկասյան բանակ։ Նրա կազմի մեջ մտան Անդրկովկասյան հանրապետությունների ազգային դիվիզիաները։

1923 թվին Առանձին Կովկասյան Բանակը պարզեատրվեց Կարմիր Դրոշի շքանշանով և այնուհետև կոչվեց Կովկասյան Կարմրադրոշ բանակ։

Կովկասյան Կարմրադրոշ բանակի զորամասերը պահպանում են մեր Հարավային սահմանները, վորով և ապահովում են Անդրկովկասի բանվորների և գյուղացիների խաղաղ աշխատանքի հնարավորությունը։

Հայկական Կարմիր Բանակն ել քաղաքացիական կոխվների պատմություն ունի։ Դաշ-

նակների ժամանակ նրանց զորքը զբաղված է թուրք գյուղացիներին կոտորելով և գյուղեր թալանելով։ Նրա մեջ կարգապահություն չկառ և նա խմբապետների ձեռքին խաղալիք է։

Դաշնակների բանակը ջարդ ու փշուր յեղավ 1920 թվին տաճկական փոքրաթիվ զինվորների կողմից։

Հայաստանի խորհրդայնացումից հետո բանվորա-գյուղացիական իշխանությունը դաշնակների բանակը վերակազմության յեւթարկեց։ Նրանից հեռացվեցին խմբապետներ և թալանչի ու ցարական ոֆիցերները։ Հայաստանի խորհրդային իշխանությունն էլ ունեցաիր բանվորա-գյուղացիական կարմիր բանակը։

1921 թվի գաշնակների կազմակերպութեարքարարյան հակահեղափոխության ժամանակ Հայաստանի Կարմիր Բանակը ճնշեց այսպատամքությունը։ Ղամարլվի և Յելենովկայի Փրոնտաներում կարմիր Բանակը ամիս կես հերոսարար կովեց գաշնակ հակահեղափոխականների դեմ և ապրիլի 2-ին վերադրավ Յերևանը։ Զանգեզուր փախած և խմբապետներին միացած գաշնակներին Հայաստանի Կարմիր Բանակը մի շարք կոխվներով ջարդ ու փշուր արագ և վերջնականապես զուրս վոնդեց խորհրդային իշխանության սահմաններից։

Դաշնակները խուճապով փախան Պարսկաստան։

## 20. ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԵԼ

1905 թվականի հեղափեխության ժամանակ նավասորմը մեծ դեր կատարեց։ «Պոտյումկին» հածանավի նավաստիները Ողեսայում ապստամքություն բարձրացրին։ Նույնը տեղի ունեցավ Սևաստոպոլում, վորակեղ լեյտենանտ Շմիդտը նավաստիների գլուխ անցավ։ Հոկտեմբերյան հեղափոխության և քաղաքացիական կովի ժամանակ նավաստիները կարմիր Բանակի ավանդաբարդն ելին։ Սպիտակ գվարդիականները մեր նավասորմի մի ժաման փշացրին և իրենց հետ տարան։ Պատերազմը վերջանալուց հետո՝ ձեռնարկված և ուղմական նավասորմի վերականգնման գործը։ Նավասորմի շեֆությունն իր վրա յե վերցրել կոմսոմոլը։ Հազարավոր լավագույն կոմսոմոլիստներ մտել են ուղմածովայինների կագրերը։

## 21. ՌԿԿ (Բ) ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐՎԻ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ԱՅԺՄ

Իր գոյության առաջին խոկ որից սկսած՝ Խորհրդային իշխանությունը պետք է դիմանար՝ ոռոսական և ոտարերկրյա կապիտալիստների զինված ուժերի հարածյուն բուռն

Ճնշումներին։ Մահացու վտանգի առաջ բահավոր դասակարգը և գյուղացիությունը համախըմբվեցին և սազմական դաշինք կտպեցին՝ հարձակվող թշնամուն զինված հակահարված տալու համար։ Լենինն ու իր կուսակցությունն այդ անքակտելի միության գլուխն անցան և ամրացրին։ Յեղել են ժամանակներ, յերբ Ռեկի (ր) անդամների մինչեւ կեսը (300,000) գտնվել են Կարմիր Բանակում։ Կոմունիստները՝ զանազան պաշտոններում—հասարակ չարքային մարտիկից սկսած մինչեւ գերազույն հարձանատարությունը—Կարմիր Բանակի բոլոր մարտիկների համար որինակ ելին ծառայում։ Նրանք, կոմունիստները, իրանց արյունով զոդեցին Կարմիր Բանակի շարքերը և նրանց գեպի հաղթանակներ առաջնորդեցին։ Միևնույն ժամանակ կոմունիստների զեկավարությամբ տեղերում խորհրդային իշխանությունը ձեռք եր առնում բոլոր միջոցները, վորպեսզի Կարմիր Բանակն ապահովե այն բոլոր միջոցները, վորոնք անհամաժեշտ են կովի և հաղթանակի համար։ Կարմիր Բանակի համար հացը վերցվում եր գյուղացիներից մասնատրության յեղանակով (բազերեցու)։ Բանվորներն ամրացված ելին ձեռնարկություններին։ Աշխատավարձը վճարվում եր բնական մթերքներով։

Յերկիրը գարձավ ուղղական ճամբարակ (լադեր)։ Միայն այդպիսի ծանր գնով եր, վորթշնամիները հաղթվեցին։

## 22. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԽԱՂԱՂ ՎԻՃԱԿՈՒՄ

Ճենց վոր խորհրդային Հանրապետություններն սպիտակ գվարդիական բանդաներից և ինտերվենաներից մաքրվեցին, Կարմիր Բանակն սկսում ե կրծատվել։ 5,300,000-նոց Կարմիր Բանակը կրծատվելով հասնում է մինչեւ 562,000։ Խորհրդային իշխանությունը քանից սուաջարկել ե իր կապիտալիստական հարեաններին՝ զինաթափվել, վոր հնար լինի թեթևացնելու աշխատավորության ուղղմական ծանրությունը, սակայն այդ սուաջարկությունները մերժվել են։ Կապիտալիստական սկետությունները շարունակ սպառազինվում են։ Մենք միշտ պետք ե պատրաստ լինենք՝ զինված հակահարված տալու։ Ուստի և խորհրդային կառավարությունը ուշադրություն է դարձնում Կարմիր Բանակի վորակը լավացնելու վրա (նյութական վիճակի բարվոքում, ուստից ման կանոնավորություն, կապ՝ քաղաքացիական կազմակերպությունների հետ)։ Դրա հետ միասին ձեռնարկված ե յերկրային զորամասերի կազմակերպության գործը. այդ միջո-

յը հնար ե տալիս աշխատավորներին յերկար ժամանակ զորանոցներում չպահել և նրանց գործից չկտրել, մյուս կողմից ել ուժեղացնում ե յերկրի պաշտպանությունը:

### 23. ՌԿԿ (բ) ԲԶԻՋԸ ԶՈՐԱՄԱՍՈՒԽՄ

ՌԿԿ (բ) նախնական կազմակերպությունը բանակում՝ վաշտի բջիջն ե, վորր կազմակերպվում ե, յերբ ՌԿԿ (բ) անդամներից կան գոնե յերեք հոգի: Զորամասի կոմունիստական բջիջը ունի իր հիմնական խնդիրը, այն ե՝ սերտ կապ հաստատել կուսակցության և կարմիր բանակային մասսայի միջև, պարզել անկուսակցական կարմիր բանակայիններին կուսակցության գերն ու նշանակությունը, վոր նա ունի աշխատավորության պայքարում շահագործողների գեմ, ամրացնել կուսակցության տղեցությունը, գրավել կուսակցության նոր անդամներ և գաստիարակել թեկնածուներին:

ՌԿԿ (բ) բջիջը զորամասում՝ աշխակցում և հրամքադիմին կարմիր բանակայինների կաստիարակության գործում և աշխատում է իր անդամների քաղաքական և կուլտուրական ժակարդակը բարձրացնելու վրա: ՌԿԿ (բ) բջիջն աշխատանք ե տանում ՌԼԿՅԵՄ անդամների մեջ: Վաշտերի կոմբջիջները միանում են

ե կազմում են գնդի կոլեկտիվ: Կուսակցության անդամ կարող ե լինել ամեն մի ազնիվ, տոկուն, բանվորների և գյուղացիների գործին անսահմանորեն նվիրված կարմիր բանակային:

### 24. ՌԼԿՅԵՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒԽՄ

ՌԼԿՅԵՄ կարմիր նավատորմի չեփն ե: Միությունն որեցոր աճում, մեծանում ե (սկզբում 22,000 անդամ ուներ, 1924 թվի համապատարի ժամանակ միության անդամների թիվը հասնում եր 840,000-ի): ՌԼԿՅԵՄ վեցերորդ համագումարը (1924 թ. հուլիս) վորոշեց ՌԿՅԵՄ վերակռչել Ռուսաստանի Լենինյան Կոմինիսարական Յերիտասարդության Միություն—ՌԼԿՅԵՄ:

ՌԼԿՅԵՄ հոգ ե տանում աշխատավոր յերիտասարդության լուսավորության վրա:

ՌԼԿՅԵՄ աշխատում ե ամենից առաջ գրագիտություն սովորեցնել բանվոր և գյուղացի յերիտասարդության:

ՌԼԿՅԵՄ աշխատում ե իր շարքերի մեջ առնել գյուղական յերիտասարդության չքավոր, բատրակ և միջակ տարրերին:

ՌԼԿՅԵՄ անդամները կարմիր Բանակում հանդիսանում են կուսակցությունը մասսայի ների մեջ: Վաշտերի կոմբջիջները միանում են

Հետ կապող ողակներից մեկը՝ կարմիր Բանակում ՌԼԿՅԵՄ բջիջներ չեն կազմակերպվում:

ՌԼԿՅԵՄ բջիջներին կից ստեղծվում են ՌԼԿՅԵՄ կողմէկակիցներ:

### ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՌԿԿ (Բ)

25. ԱՐԻՍ. ԿՈՄՈՒՆԻՍՏ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ)՝ ԼԵՆԻՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Ե

Ընկ. Լենինն իր կյանքի 25 տարին ավել և Ռուսաստանի կոմունիստական կուսակցության (Բ) կազմակերպության գործին: Ռնկ (Բ)՝ ընկ. Լենինի ղեկավարությամբ ղեկավարում եր բանվոր դաստիարակի պայքարը ցարիզմի ժամանակաշրջանում: Ընկ. Լենինը ղեկավարում եր 1905 թ. բանվորների ապստամբությունը և 1905 թ. հեղափոխության պարտությունից հետո՝ ռեակցիայի շրջանում պահեց, դաստիարակեց և ղեկավարեց կուսակցությունը: Ընկ. Լենինը բանվորներին և գյուղացիներին 1914 թվի համաշխարհային սպանդանոցի գեմ հանեց: Նա ցարական Ռուսաստանի բանվորներին և գյուղացիներին հանեց կապիտալիզմի գեմ և 1917 թվականի հոկտեմբերին նրանց տարավ հաղթանակի: Բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ, ընկ. Լենինի ղեկավարու-

թյամբ, բանվոր դաստիարակը և գյուղացիությունը հետ մզեցին սպիտակ բանակների գրոհները և ստեղծեցին աշխատավորների հզորագույն հանրապետությունը: Ընկ. Լենինի ավանդի համաձայն՝ կուսակցության անդամ կարող ել լինել ազնիվ, նոր կյանքի համար պայքարին իր անձը աննենդ նվիրած բանվորն ու գյուղացին:

26. Ընկ. ԼԵՆԻՆԻ ՄԵԾԱՄԵԾ ԽՆԴԻԲՆԵՐԸ ԲԿԿ (Բ) ԽՆԴԻԲՆԵՐՆ ԵՆ

Ընկ. Լենինը կուսակցության ավանդ թողեց—բոլոր ուժերով ամրացնել բանվորների և գյուղացիների միությունը: Բանվորների և գյուղացիների միությունը կամ կազր պետք ել լինի ամեն բանում, անտեսության մեջ փոխագարձ ողնություն, կուլտուրան բարձրացնելու, բնդշանուր թշնամու գեմ կովելու մեջ:

Ընկ. Լենինն ավանդ և թողել—ամրացնել զանազան ազգությունների աշխատավորների կապը: Կուսակցությունը՝ ընկ. Լենինի ղեկավարությամբ ստեղծել և խորհուրդների առաջին հանրապետությունը: Պետք և հանրապետությունը պահպանել համաշխարհային կապիտալիզ: Ընկ. Լենինն ավանդ և թողել կուսակցության—ամրացնել կարմիր բանակն ու

կարմիր նավատորմը։ Խորհուրդների հանրապետությունն ամբողջ աշխարհի բանվորենքին ու գյուղացիներին ցույց է տալիս նրանց ազատագրության ուղին։ Բնկ. Լենինն անդադար հոգ եր տանում ամբողջ աշխարհի աշխատավորության միության մասին—այդ կուսակցության ինդիրն է։ Բանվորները, գյուղացիները, կարմիր բանակայինները—ամենքը պետք է համախմբվեն բնկ. Լենինի զաղափարների չուրջը։ Բանվորներն ու գյուղացիները՝ ՈԿԿ (Ք) զեկավարությամբ, պետք է նվիրվեն մեծ գործին, բնկ. Լենինի ավանդներն իրականացնելու գործին։

## ԽՍՀՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԶ

27. ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ—ԿԱԼՎԱՆԱՏԵՐԵՐ, ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐ, ԿՈՒԼԱԿՆԵՐ ՅԵՎ ՀԱՄԱՇԽԱՅԻՑԻՆ ԿԱՊԻՏԱԼ

Կալվածատերերը, կուլակները, կապիտալիստները և ֆարբիկների վարձակալները՝ բանվորների և գյուղացիների թշնամիներն են։

Նրանք բոլորը ցանկանում են վոչնչացնել բանվորների և գյուղացիների իշխանությունը և ստեղծել բուրժուական իշխանություն՝ աշխատավորներին շահագործելու համար։ Ուսւ

կալվածատերերի և կապիտալիստների մի մասը արտասահման է փախել և այնտեղից պայքար է մղում բանվորա-գյուղացիական իշխանության դեմ։ Բոլոր յերկրների կապիտալիստները խորհրդային հանրապետության թշնամիներն են։ Կարմիր Բանակը և մեր տրնտեսության վերելքն ստիպեցին ոտար պետություններին ճանաչել մեր բանվորա-գյուղացիական կառավարությունը։ Մեր յերկրում շատ հարստություն կա (վուչ, նավթ, յերկաթ)։ Համաշխարհային կապիտալը ցանկություն ունի այդ հարստությունների ազատ տեր ու տիրականը լինելու։ Ատարերկրյա բուրժուաները մեզ սպառնում են նոր հարձակումների վտանգներով։ Մենք պետք ե պատրաստ լինենք կապիտալիստական պետությունների կողմից նոր հարձակումների։

## 28. ԼԵՀԱՍՏԱՆ ՅԵՎ ՌՈՒՄԻՆԻԱ

Այժմյան լեհական պետությունը կազմվել է 1918 թվի վերջին։ Լեհաստանի բնակիչների թիվն է 29 միլիոն, զորի 50 տոկոսը լեհեր են, իսկ մնացածը զանազան ազգություններ (ուկրայնացի, բելառուս, չեռքա)։ Լեհաստանում կարգադրություններ անողները Փրանսիական և անգլիական կապիտալիստներն են։ Հողը

գլխավորապես պատկանում է կարգածատերերին։ Գյուղացիների մեջ շատ կան հողագուրեղներ և սակավահողեր։ Գյուղացիները մեծ կախում ունեն կարգածատերերից, վորոնցից ստիպված են վարկով հող վերցնելու և վորոնց մոտ նրանք աշխատում են որավարձով։ Մանավանդ ծանր պայմաններում են գտնվում զույհական ազգություն պատկանող գյուղացիները, վորոնք բացի տնտեսական կեղեցում ից, կրում են նաև ազգային ճնշում։ Լեհաստանում այս վերջին ճնշումը շատ մեծ և և ազգությունների մեջ առելություն և առաջ բերում լինական պետություն նկատմամբ։ Գործազրկությունը մշտական յերեւյթ է։ Գործազրկությունը հաճախ են լինում։ Լեհական շլյախոտն (մանր ազնվականությունը) դաժան կերպով է վարչվում բանվոր դասակարգի և գյուղացիության հետ, մանավանդ արևելյան ծայրակավառերում՝ ուկրայինցիների և բելառուսների շրջաններում։ Կոմկուսակցությունը հարածվում է և գործում և գաղտնի։ Լեհաստանի պահում և մի բանակ, վոր բաղկացած և 300,000 մարդուց։

Ռումինիան խոչոր կարգածատերերի յերկիր է։ Հողի մեծ մասը գտնվում է խոչոր կարգածատերերի ձեռքին։ Արդյունաբերությունը

ուսար կապիտալիստների ձեռքին է։ Ամբողջ բանվոր զաստկարգի վիճակը Ռումինիայում չափազանց ծանր է։ Յերկրում վայրագարար իշխում և սպիտակ տերրորը։ Ծանր է մանավանդ բենաբարբիտյի վիճակը, վորին Ռումինիան 18 թվին բանությամբ տիրացել է, վորի բնակիչները, սակայն, ձգտում են միանալու և ՍՀՄ-ի հետ։ Ռումինական և լինական սահմանների վրա հարկավոր է սուր աչքով հոկել։

#### 29. ԱՆԳԼԻԱ. ՅԵՎ. ՖՐԱՆՍԻԱ.

Անգլիան և Ֆրանսիան կապիտալիստական յերկրներ են, վորոնք ունեն շատ հարուստ զաղություններ աշխարհի բոլոր մասերում։ Անգլիան ունի ամենաուժեղ ուղղմական և առեւրական նավատորմ։ Անգլիան տիրում է մի շարք յերկրների վրա, վորոնց բնակիչների թիվը 450 միլիոն է, իսկ Ֆրանսիան աշխարհի բոլոր յերկրներում ունի զաղությունը՝ 60 միլիոն բնակիչներով։ Յերկու յերկրներում ել իշխանությունը կապիտալիստների ձեռքն է, վորոնք իրանց կամքքը թելադրում են մինիստրներին և կառավարության։

Անգլիան և Ֆրանսիան մեզ ճանաչել են։ ԽՍՀՄ-ի և Անգլիայի միջև՝ 1921 թվից գոյությունը ունի առեւրական պայմանագիր, իսկ

Ֆրանսիայի հետ բանակցություններ ենք վարում առևտրական պայմանագիրներ կնքելու համար:

Անգլիայի այժմյան սեհարյուրակային կառավարությունը (պահպանողական) Խ.Ս.Հ.-ի ամենավոխերիմ թշնամին ե: Անգլիան և ֆրանսիական թալանիչների մեջ մեծ հակասություններ կան, վորոնց հիմքը մրցությունն ե (կոնկուրենցիա) և աշխարհը բաժանելու խնդիրը: Դրա համար ել Անգլիան մեծացնում ե իր նավատօքը, իսկ ֆրանսիան մինչև այսոր ել պահում ե 800,000-նոց բանակ: Ֆրանսիայի և Անգլիայի կոմունիստական կուսակցությունները զարգանում ե մեծանում են: Հզորադույն կապիտալիստական պետությունների միջև գոյություն ունեցող հարաճուն հակասությունները բանը կը հասցնեն նոր իմպերիալիստական պատերազմների:

Հնարավոր ե՝ հարձակումներ լինեն նաև մեզ վրա, վորպես խորհրդային յերկրի վրա, վոր արմատապես տարբեր ե կապիտալիստական յերկրներից: Կարմիր Բանակը պետք է պատրաստ լինի այդ հարձակումներին ընդուածելու և նրանց յետ մղելու:

### 30. ԳԵՐՄԱՆԻԱ

Իմպերիալիստական պատերազմից Գերմանիան կորցրեց վոչմիայն իր բոլոր գաղութները, այլև իր յեվրոպական հողերի նշանավոր մասը: Բանակը կրծատվել ե մինչև 100,000 հոգու:

Գերմանիան մի միացյալ հանրապետություն ե, վորի բնակիչների թիվը հիսուն միլիոնից ավելի յե: Գերմանիան գլխավորապես արդյունաբերական յերկիր ե, սակայն նրա գյուղատնտեսությունն ել բարձր զարգացման ե հասած: Յետպատերազմյան ավերմունքի ամբողջ ծանրությունն ընկած ե Գերմանիայի բանվոր դասակարգի վրա, վորի վիճակը չափազանց վատթարացել ե:

Կոմունիստական կուսակցությունը 300 հազարից ավելի անդամ ունի և համար պայքար ե մզում Գերմանիայի կապիտալիստական կառավարության և սոցիալ-դեմոկրատիայի դեմ:

1923 թվականի հոկտեմբերին հեղափոխական շարժումը Գերմանիայում մեծ չափերի հասավ և կարմիր հարյուրակներ կազմակերպելու ու զինված տապատամբության պատրաստվելու բնույթ ընդունեց: Ս. դ. կառավարությունը և ֆաշիստական զորքերի հարձա-

կումը ապստամբությունը ձնչեց։ Մ. դ. զավաճանության շնորհիվ՝ այժմ գերմանական հանրապետության նախագահն և վիլհելմ կայսրի նախկին Փելդմարշալ Հինդենբուրգը։

### 31. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ-ՆԵՐԻ ՎՃԱՆԴՆԵՐԸ

Իմպերիալիստական պետությունները միշտ ձգում են նոր հողեր գրավելու։ Նոր հողերը նրանց հարկավոր են տեղական ծովովուրդներին շահագործելու և կեղեքելու համար։ Իմպերիալիստական պատերազմի ժամանակ ձեռք բերած ավարը բաժանելու հողի վրա, այլև նոր թալաններ ձեռք բերելու տենչի հետեանքով խոչը կապիտալիստական պետությունների մեջ ընդհարումներ են տեղի ունենում։ Կապիտալիստների միասնականությունը խախտը վում է, յերբ զանազան կապիտալիստական պետությունների մեջ շահերը բաղիկում են։ Թալաններ և կեղեքելու իրավունքի համար վեճը իմպերալիստական պետությունների մեջ լուծվում է պատերազմներով։ Անգլիայի և Ֆրանսիայի Ամերիկայի և Յափոնիայի միջև դժգոհությունները հասունանում են։ Բոլոր իմպերալիստական պետությունները գինվում են նոր պատերազմների համար։

### 32. ՄԻԼԻՏԱՐԻԶՄԻ ՅԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽ-ՆԻԿԱՅԻ ԱՃՈՒՄԸ

Կապիտալիստական պետությունների սպառազինության ծախսերն անհավատալի չափերով մեծանում են։

	1913	1921
Մ. Նահանգներ	318 միլ. դոլ.	1,845 միլ.
Անգլիա	142 »	823,750,000
Ֆրանսիա	155 »	825,000,000
Յափոնիա	48 »	115,000,000

